

ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԶԱԼՔԱՅԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄԵՋ

Երեկ գիշեր, Չալքայի մայրուղիին եւ յիշեալ շրջաններու փողոցներուն մէջ, ներքին ապահովութեան ուժերը եւ լիբանանեան բանակի ջոկատներ կատարեցին ձեռքարկումներ: Չեքքայեալներ երիտասարդ տարրեր էին, որոնք կ'ուղղուէին կամ կը վերադառնային Նաքքաշի մէջ տեղի ունեցող Կապրիէլ Մըրի ընտրութեան նուիրուած փառասունէն:

Ըստ երեւոյթին, երիտասարդները շփոթած էին ուրախութիւնը եւ գրգռիչ բացագանչութիւններն ու ելոյթները ու դիմած՝ խոռվարարութիւններու: Մինչ այդ, Նաքքաշի փառասունը շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԷԼԻԱՍ ՍԵՐ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՒ ԹՂԹԱԾՐԱՐ ԶՂԵՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երէկ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին յայտարարեց.

«Վերջին օրերուն զրպարտութիւններու եւ ցեխարձակումներու թիրախ դարձայ. այսօր իրողութիւնները պիտի ներկայացնեմ բոլորին», ըսաւ նախարար Մըր. ան յիշեցուց, որ Քուէախոյզ Գերագոյն Յանձնախումբը իրեն յղած է առաջին որոշումը, որուն մէջ արդիւնքին կողքին կը խնդրէ, որ ինք վճռէ Հըմ-լայալի քուէատուփի ճակատագիրը, նկատի ունենալով, որ այդ քուէատուփի արդիւնքը օրինազանցութիւններու պատճառով չզեղեալ համարուած է քուէախոյզ դատաւորին կողմէ: Մըր նաեւ յիշեցուց, որ ինք Քուէախոյզ Գերագոյն Յանձնախումբին պահանջած օրէնքի հիմամբ վճռել վերջնական արդիւնքը, որպէսզի ինք յայտարարէ զայն:



Նախարար Մըր մամուլի ասուլիսի պահուն

բար ինք կրնար այդ արդիւնքը յայտարարել, բայց ինք, իր խղճի ձայնին անսայով, ինչպէս նաեւ պետական պաշտօնատարի պատասխանատուութեան գիտակցելով՝ ներքին գործոց նախարարութեան ընդհանուր տնօրէն Աթալլա Ղաշչամէն խնդրած է ստուգել քուէահամարը, եւ այդ ատեն ի յայտ եկած է, որ Քուէախոյզի քուէատուփի արդիւնքը սխալմամբ երկու անգամ հաշուուած է: Ան դիտել տուաւ, որ կրնար իր քրոջ յաղթանակը յայտարարել եւ ընդդիմադիրներուն ձգել այդ սխալին սրբազրուեան համար Սահմանադրական խորհուրդին

դիտելու օրինական ուղին, բայց ինք սխալ տեղեկացուցած է դատական քուէախոյզ մարմինն եւ սպասած՝ անոր պաշտօնական սրբազրուեան, որպէսզի անոր հիման վրայ ինք պաշտօնապէս յայտարարէ թեկնածու Կապրիէլ Մըրի յաջողութիւնը՝ 17 քուէի տարբերութեամբ:

Ան յայտնեց, որ նախագահ գործի խնդիրը չէ միջամտած եւ միջոցառում չէ օրէնքի անկողմնակալ գործարարութիւնը:

Նախարար Մըր ըսաւ, որ Հըմլայալի քուէատուփի ջնջումը մէկ քուէի հարց չէ, այլ շարք մը օրինազանցութիւններու:

ՄԻ. ԱՅ. ԷՅ. Ի ՏՆՕՐԷՆԸ ՌԱՄԱԼԼԱՅԻ ՄԵՋ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ԵԱՍԷՐ ԱՐԱՖԱՔԻ ՀԵՏ

Մի. Այ. Էյի տնօրէն ճորձ Թենըթ երէկ Ռամալայի մէջ տեսակցութիւն ունեցաւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի հետ, քննարկելու համար անհրաժեշտ բարեկարգումները, ինչպէս նաեւ Իսրայէլի դէմ անձնասպանական գործողութիւններուն դէմ պայքարելու միջոցները: Իսրայէլ պաղեստինցիներուն հետ բանակցութիւնները վերսկսելու կարելիութիւնը պայմանաւորած է վայրագութեամբ եւ անձնասպանական գործողութիւններու դադարեցումով: Իսրայէլ կը պահանջէ նաեւ բարեկարգումներու ենթարկել պաղեստինեան իշխանութեան բոլոր կառոյցները, լատկապէս՝ ապահովութեան ուժերը:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն յիշեալ պահանջները վերստին պիտի շեշտէ Միացեալ Նահանգներու նախագահ ճորձ Պուշի հետ տեսակցութեան ընթացքին, որ տեղի պիտի ունենայ Յունիս 10ին: Սպիտակ Տան կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը նշեց, որ Շարոնի այցելութիւնը կ'իյնայ ամերիկացի ու իսրայէլացի ղեկավարներու խորհրդակցութիւններու ծիրէն ներս: Միջին Արեւելքի խաղաղութիւն հաստատելու համար, որ Երկուշաբթի գիշեր հանդիպում ունեցած էր Թենըթի հետ, կ'ակնկալէ, որ ամերիկացի պաշտօնատարի շրջապատը եւ Միացեալ Նահանգներ արժեւորեն խաղաղութեան գործընթացը եւ որոշումը տան յայն յառաջխաղացքի մէջ դնելու մասին: Արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս իր կարգին ըսաւ, որ բնական է, որ նախագահ Պուշ ուզէ լսել նաեւ Իսրայէլի տեսակետները եւրակացութեան մը լայն շրջանում: Փերէս աւելցուց, որ Ուաշինկթըն հաստատար արդէն իսկ ունի պատկերացում մը խաղաղութեան բանակցութիւններուն վերադառնալու համար, բայց այնպէս կ'ուզէ նաեւ լսել այլ տեսակետներ:

Սուելով պաղեստինեան ուժերը բարեկարգելու ծրագիրին մասին, Փերէս ըսաւ, որ Թենըթ Արաֆաթէն պիտի պահանջէ միացնել ապահովութեան ուժ տարբեր կառոյցները, որոնց կ'անդամակցի ռեւէ պաղեստինցի: Ուաշինկթըն եւ Թէյ Աւի կը պահանջեն, որ բոլոր խմբուի մէկ հրամանատարութեան տակ: Փերէս ըսաւ նաեւ, որ Արաֆաթ կամովին պիտի չկատարէ այս բարեկարգումը, հետեւաբար կը նախատեսուի, որ Թենըթ ընելիք ունենայ այս առնչութեամբ:

Պաղեստինցի պաշտօնատարներ կ'ըսեն, որ Այսրյորդանանի դէմ իսրայէլեան բանակին հինգ շաբթուան արշաւը (Մարտէն Մայիս) ու ապա՝ օրական յարձակումները անկարելի կը դարձնեն ապահովութեան ուժերուն աշխատանքը: Երեկ տակաւին, իսրայէլեան ուժերը քանի մը ժամուան համար ժենին ներխուժեցին ու ձեռքարկումներ կատարեցին: Իսրայէլեան ուժերը քանի մը ժամուան համար ժենին ներխուժեցին ու ձեռքարկումներ կատարեցին: Իսրայէլեան ուժերը քանի մը ժամուան համար ժենին ներխուժեցին ու ձեռքարկումներ կատարեցին: Իսրայէլեան ուժերը քանի մը ժամուան համար ժենին ներխուժեցին ու ձեռքարկումներ կատարեցին:

Միւս կողմէ, պաղեստինեան իշխանութիւնը Երկուշաբթի գիշեր բեկանած էր գերագոյն ատենին այն որոշումը, որուն հիման վրայ պատ պիտի արձակուէր ԷՖ. Փէ. Էյ. Փէ. ի ղեկավարներէն Ահմէտ Սատաթը, որ Իսրայէլի կողմէ կ'ամբաստանուի վրաստանութեան նախարարին սպանութիւնը ծրագրելու յանցանքով: Սատաթի բանտարկութեամբ է, որ Իսրայէլ վերցուցած էր Արաֆաթի կեդրոնատեղիին պաշարումը: Գերագոյն ատենին վճիռը կը սպառնար Թենըթի առաքելութեան, մինչ Իսրայէլ իր կարգին կը սպառնար դատել Սատաթը: Կանխարգիւելու համար այս բոլորը, պաղեստինեան իշխանութիւնը բեկանեց վճիռը, յայտարարելով որ կը յարգէ ատենին վճիռը, սակայն կ'արգիլէ անոր գործադրութիւնը իսրայէլեան սպառնալիքներուն պատճառով: Ատենը վճռած էր, որ Սատաթը Ռեհաւան Զէիլի սպանութեան առնչող որեւէ փաստ չէ գտած:

ՄՈՒՊԱՐԱՔԵԱԲԱԹԱՎԵՐՋԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԸՆԿՆԵՐ Կ'ԱՅՑԵԼԷ

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաֆ վաղը Միացեալ Նահանգներ կը ժամանէ պաշարով՝ Էջ 10

ՆԱԽԱԳԱՅ ՌՈՊԵՐԹ ԲՈՉԱՐԵԱՆ ՎԱՂԸ ԿԸ ՄԵԿՆԻ ՊԻԵԼՈՌՈՒՄԻԱ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան վաղը պաշտօնական երկօրեայ այցելութեան համար կը մեկնի Պիելորոսիա: Քոչարեանի կ'ընկերակցին առեւտուրի նախարար Կարէն Ճշմարտեան, գիւղատնտեսութեան նախարար Դաւիթ Չաղոյեան, կրթութեան եւ գիտութեան քաղաքապետ Ռոպէրթ Նազարեան, Ազգային ժողովի պատգամաւորներ եւ պաշտօնական այլ անձնակազմի անդամներ, գործարարներ, լրագրողներ:

Քոչարեան հանդիպում մը պիտի ունենայ Պիելորոսիոյ նախագահ Ալեքսանտր Լուբաշչենքոյի հետ: Կը քննարկուին երկու երկիրներուն միջեւ կապերը, ինչպէս նաեւ կը ստորագրուին համաձայնագրեր՝ ազատ առեւտուրի, երկու երկիրներուն միջեւ առանց վիզայի եւ ռազմական արհեստագիտութեան մարզերէն ներս:

Քոչարեան պիտի տեսակցի նաեւ վարչապետ Կենատի Նովիցկիի հետ, ապա կը կատարէ Միւսքի մէջ Հայաստանի դեսպանատան տրամադրուած նոր հողաշերտին բացումը եւ կը զետեղէ անոր հիմնաքարը:

ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ԱԻԱՐՏԵՑ ՍԹՐԱՉՊՈՒՐԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Երեկ ասարտեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի Սթրապպուրկ երկօրեայ այցելութիւնը: Օսկանեան հանդիպումներ ունեցած է Եւրոպական խորհուրդի բարձրաստիճան պատասխանատուներու հետ. հանդիպումներուն ընթացքին արծարծուած են Լեւոնայի Ղարաբաղի տագնապի կարգաւորման, Եւրոխորհուրդին հետ Հայաստանի համագործակցութեան եւ Հայաստան - Եւրոպական խորհուրդի վասնական կապերու վերաբերող հարցեր:

ՌԻԼԻԸՄ ՊԸՐՆՉ ԴԱՄԱՍԿՈՍԷՆ ԺԱՄԱՆԵՑ ՊԷՅՐՈՒԹ



Ռիլիըմ Պըրնզ, Գախագահ Լահուտի մօտ


Նախագահ Կօր. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի նախագահական պալատին մէջ ընդունեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Միջին Արեւելքի հարցերու օգնական Ռիլիըմ Պըրնզը, որ Պէյրութ ժամանած էր Դամասկոսէն: Ամերիկացի պաշտօնատարը այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նէպիի Պըրրիի:

Նախագահ Լահուտի հետ տեսակցելէ ետք, Պըրնզ կատարեց յայտարարութիւն մը, որուն մէջ վերահաստատեց Միացեալ Նահանգներու լուրջ յանձնառութիւնը՝ Միջին Արեւելքի մէջ հաստատելու ամբողջական խաղաղութիւն, հիմնուած Մատրիտի սկզբունքներուն վրայ: «Մեր կարծիքով, խաղաղութեան արարական նախաձեռնութիւնը, որ որդեգրուեցաւ Պէյրութի վեհաժողովին, նոր է խոստմնալից տրեւելներ կը ներկայացնէ ամրապնդելու արդէն որդեգրուած խաղաղութեան սկզբունքները, եւ բոլոր կողմերը գիտեն, որ խաղաղութեան գործընթացին վերակենդանացումին համար անհրաժեշտ է, որ բոլորը մեծ ճիգեր ի գործ դնեն վայրագութեանց դէմ», ըսաւ ան:

Պըրնզ ըսաւ, որ նախագահ Լահուտի վերահաստատած է, թէ Ուաշինկթըն շատ մտահոգ է «Կապոյտ Գիծ»ին վրայ իրադրութեան պահանջներուն գծով, ինչպէս նաեւ «մեկ կը շարունակեն մտահոգել ՀՂԿԱՄԻՅԻ գործունէութիւնները»:

ՆԱՊԻԼ ՇԱՍՍ ԱՐԱՖԱՔԻԷՆ ՊԱՏԳԱՄ ՄԸ ՓՈԽԱՆՑԵՑ ՆԱԽԱԳԱՅ ԼԱՀՈՒՏԻ

Հանրապետութեան նախագահ Կօր. Էմիլ Լահուտ երէկ ստացաւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթէն պատգամ մը, զոր փոխանցեց պաղեստինեան իշխանութեան ծրագրումի եւ միջապային հարցերու նախարար Նապիլ Շասս:



Նախագահ Լահուտ՝ Շասսի հետ

Իսկ միջապային խորհրդածոյցով մը գումարելու առաջարկը, որուն նկատմամբ Լիբանան եւ պաղեստինցիք որդեգրած են միեւնոյն կեցումաձեւը: «Այդ ժողովի հիմը պէտք է հանդիսանայ խաղաղութեան արարական նախաձեռնութիւնը, եւ Պաղեստին ներկայ պիտի չըլլայ անոր, եթէ ներկայ չըլլան նաեւ Լիբանանի Սուրիան: Ասոր կողքին, այդ ժողովը յստակ ժամանակացոյց է նպատակ պէտք է ունենայ, որ այլ բան չէ եթէ ոչ՝ վերակենդանացնել խաղաղութեան գործընթացը, արդար լուծում տալ պաղեստինցի

գաղթականներու հարցերուն, կերտել պաղեստինեան անկախ պետութիւն, որուն մայրաքաղաքն է Երուսաղէմը», ըսաւ Շասս:

Շասս ըսաւ, որ նախագահ Լահուտ անվերապահ Կօրակցութիւն յայտնած է պաղեստինեան դատին ան հաստատեց, որ լիբանանեան եւ պաղեստինեան կողմերուն է բոլոր արարներուն միջեւ կը համակարգուի միջապային խորհրդածոյցովին գծով Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի օգնական Ռիլիըմ Պըրնզի տրուելիք պատասխանը:

ՈՒՎԼԻՏ ԺՈՄՊԼԱԹԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵԹՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԳԾՈՎ

Ընկերվար Յառաջդիմական կուսակցության ղեկավար երեսփոխան Ուալտեր Ժոմպլաթ երկվ Քլեմանտի իր տան մէջ նախագահեց «Ժողովրդավարական Հանդիպում» պլուքի ժողովին, ապա կատարեց յայտարարութիւն մը, որուն մէջ կոչ ուղղեց հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտի՝ փութացնելու Մեթնի մասնակի երեսփոխանական ընտրութիւններուն կապրիէլ Մըրի յաջողութեան յայտարարութիւնը, որովհետեւ նախագահ Լահուտ ազգային կարեւոր եւ մեծ դեր ունի եւ անկէ կը խնդրուի, որ այս հարցը իր անձին ղէմ ուղղուած չնկատէ, այլ՝ պարզ քաղաքական հարց:

Կապրիէլ Մըրի յաջողութեան յայտարարութիւնը կը կանխարգելէ մեծ հարց մը եւ արգելք կը հանդիսանայ ծայրայեղականներուն, ըլլան անոնք Բըրնէթ Երեւանի ղեկավարական քրիստոնեաները, ըսաւ Ժոմպլաթ:

Ժոմպլաթ ցաւ յայտնեց, որ ընդդիմադիրները Ազատական կուսակցութեան կեդրոնատեղիին մէջ յանուն ազատութեան եւ ժողովրդավարութեան գումարուած իրենց հանդիպումին տուած են զուտ համայնքային գունաւորում, մինչ ինքն ու իր պլուքի անդամներէն ոմանք կ'ուզէին մասնակցել անոր: Ան դիտել տուաւ, որ կարգ մը ծայրայեղականներ վերջուտին համախմբուած են եւ վերստին հրապարակ նետած են իրենց կարգախօսները:

Ժոմպլաթ ըսաւ, որ «Ժողովրդավարական Հանդիպում» ո՛չ առնական շարժումին եւ ո՛չ ալ ուրիշներուն ձեռքին միջոց պիտի դառնայ՝ հարուածելու իշխանութիւնը կամ հետագային Սուրբոյ ղէմ ելլելու:

ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՍՈՏԵՔՈՅԻ ԿԵՂՈՆԱՏԵՂԻՒՆ ՄԷՋ ԺՈՂՈՎ՝ ԸՆԴՂԻՍԱԴԻՐ ԶԱԿԱՏԻ ԱՆԴԱՍՆԵՐՈՒ

Քրնէթ Երեւանի անդամներ եւ քրիստոնեայ ընդդիմադիրներ երէկ Ազգային Ապստական կուսակցութեան Սոտեքոյի կեղոնին մէջ հանդիպում մը ունեցան: Ներկայ էին երեսփոխաններ Նեսիպ Լահուտ, Փիեռ Ժեմայէլ, Ֆարես Սուէյտ, Մասնուր Պոն, նախկին երեսփոխան Քամիլ Զիատե, Ազգային Ապստական կուսակցութեան նախագահ Տորի Շամուն, կուսակցութեան ընդհանուր քարտուղար Էլիաս Ալու Ասաի, նախկին դեսպան Սիմոն Քարամ, Սամիր Ֆրեմսիէ եւ Մասուուտ Աշքար:

Հանդիպումէն ետք երեսփոխան Նեսիպ Լահուտ յայտնեց, որ պատականներու այս կեղոնը պիտի ծառայէ այս ընտրարշաւին եւ երեսփոխանական թեկնածու Կապրիէլ Մըրի յաղթանակի յայտարարութեան: Ան նշեց, որ հարիւր առ հարիւր վստահ են, որ Հըմլայի քուէատուփի քուէները պէտք է հաշուի անուսին եւ Կապրիէլ Մըրի յաղթանակը յայտարարուի:

Լահուտ ընդգծեց, որ իր եւ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի միջեւ որեւէ հարց կամ տարակարծութիւն գոյութիւն չունի: «Նախկին փոխ վարչապետ եւ երեսփոխան Միշել Մըր միշտ ալ փորձած է նախագահ Լահուտը մասնակից դարձնել այս ընտրապայքարին: Մենք կը հսկենք նախագահ Լահուտի դիրքին եւ իրմէ կը պահանջենք, որ միջամտէ եւ օրինական յաղթականին՝ Կապրիէլ Մըրի անունը յայտարարէ», ըսաւ ան:

Իր կարգին, Տորի Շամուն պահանջեց Կ. Մըրի յաղթանակի պաշտօնական յայտարարութիւնը եւ այս իմաստով կոչ ուղղեց քաղաքական բոլոր ուժերուն, որոնց գերագոյն նպատակը երկրին գերագոյն շահերն է, միանալու ընդդիմադիրներուն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատունը սիրով կը հրաւիրէ ձեզ այցելելու

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱԲԱՐ

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԵՂԱՆԻ ԱՐՈՒԵՍ»
խորագիրով
ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՅՐԴ ՏՕՆԱԿԱՃԱՌԻՆ

Կազմակերպուած՝
«ԱՋԻՎԼՈՒՆԱ» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Եւ մասնակցութեամբ Լիբանանի մէջ հաւատարմագրուած դիւանագիտական ցերեկայացուցչութիւններու եւ լիբանանեան բարեսիրական հաստատութիւններու:

Տօնավաճառը բաց է
Ուրբաթ, Զարբաթ եւ Կիրակի օրերը,
Յունիս 7 - 9, ժամը 4:00 - 9:00
Biel - Սուիտը

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ Ը. Ը. ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

ՊԸՐՐԻ ԵՒ ՀԱՐԻՐԻ ԳՈՒՄԱՐԵՑԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ յետմիջօրէին իր գրասենեակին մէջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրպլին եւ երեսփոխան Ժան Օպէյտը:

Կարգ մը լրատուադիւրներ հաղորդեցին, որ թղթակիցներ Պըրրիի հարց տուած են, թէ «Երբ պիտի յայտարարուի ժողովրդավարութեան թաղումը» եւ ան պատասխանած է. «Հակառակը, մօտ օրէն պիտի յայտարարուենք ժողովրդավարութեան յաղթանակը»:

ՔԱՐԻՄ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ԷՄԻԼ-ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՑԻՆ ԿԱՊՐԻԷԼ ՄԸՐԸ

Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Բարիմ Բագրատունի շնորհակարան Կապրիէլ Մըրի ընտրութիւնը, մարտի 10-ին, որ ան յաջողի լաւագոյն ծառայելու իրեն:

«Այս արդիւնքը պատասխանն է բոլոր անոնց, որոնք անհիմն ամբաստանութիւններ ուղղեցին իշխանութեան, թէ ան կողմ է կամ կը նախընտրէ թեկնածու մը», ըսաւ Լահուտ, բարձր գնահատելով ներքին գործոց նախարարի պարկեշտութիւնը, մանաւանդ որ ան տարած է ռիսկայնորէն զրպարտութիւններն ու ցեխարքայութիւնները: «Նախարար Էլիաս Մըրի եւ անոր պարկեշտութեան շնորհիւ երեւան եկաւ Բագրատունի թուէտուփի սխալը, եւ Քրնէթ Երեւանի անդամներէն ոչ մէկը զայն գիտէր», ըսաւ ան:

Երեսփոխան Էմիլ Լահուտ շնորհակարան Կապրիէլ Մըրի ընտրութիւնը եւ գոյուցուց հարց տուած էր իր թղթակիցները:

«Փաստօրէն նախագահ Լահուտ հաւատարիմ մնաց օրէնքի եւ հաստատութեան պետութիւն կերտելու իր կոչին եւ սկզբունքային յանձնառութեան», ըսաւ Բագրատունի:

Քրնէթ Սֆոնտի Էմիլ-Էմիլ Լահուտ նկատել տուաւ, որ Մեթնի մասնակի ընտրութիւններուն թեկնածու Կապրիէլ Մըրի յաջողութեան

մայնքային եւ տեղայնական կիրքերու հրահրումի կրկնութեան:

● ԼԻԲԱՆԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԼԻԿԱՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԵՐԸ ԿԱՊՐԻԷԼ ՄԸՐԻ ընտրութիւնը շնորհակարանութիւններու, որ թէ՛ պետութեան, թէ՛ ժողովուրդին մօտ գերակշիռ եղած է բանական մօտեցումը:

Համախմբուած ողջունեց ընտրութիւններու արդիւնքը յայտարարելու հարցը լուծելու ձեւը, մանաւանդ նախագահ զօր. Էմիլ Լահուտի պետական գործիչի վայել եւ իր դիրքին համապատասխանող կեցուածքը, որ վերահաստատեց, թէ սահմանադրական հաստատութիւնները կը մնան հայրենիքի երաշխիքը:

Համախմբուած կոչ ուղղեց բոլոր կողմերուն՝ վերջ դնելու քաշքուքներուն, միասնաբար գործելու եւ գնահատելու քրիստոնեաներու գանձուածային մասնակցութիւնը ընտրութիւններուն:

Հանդիպումէն ետք Կապրիէլ Մըրի յաղթանակը յայտարարուած էր, որովհետեւ իր քուէները անոր համար յաղթանակ էին:

ՀԸՍ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՄԵԹՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՒՆ ՈՒՇԱՑՈՒՄԸ

Նախկին վարչապետ Սեյիմ Հըս, որ կը գտնուի Արաբական Միացեալ Էմիրութիւններ, քննադատեց հիւսիսային Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն արդիւնքներուն ուշացումը, ըսելով, որ ընտրութիւններու արդիւնքներուն շուրջ տեղի ունեցող բոլոր բանավէճերուն ընթացքին կառավարութեան բացակայութիւնը վզալի էր: «Ընտրութիւններու արդիւնքներուն շուրջ

բոլոր տարակարծութիւններն ու բանավէճերը հասան ազգային քաղաքական տագնապի մը աստիճանին: Ընտրութիւններու արդիւնքներու յայտարարութիւնը անշուշտ որ ներքին գործոց նախարարութեան իրաւունքն է, սակայն երբ ան անկարող է կեցուածք յայտարարելու, հարկ է որ նախարարաց խորհուրդը կայացնէ նիստ մը եւ յայտարարէ կառավարութեան կեցուածքը: Նման

իրադարձութիւններէ կառավարութեան բացակայութիւնը ոչ միայն անհասկնալի է եւ անբացատրելի, այլ նաեւ՝ անօթալի», ըսաւ Հըս:

Studio Lantern

• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարահանումներ
Շեմ. 01-266866
Էլ. 03-695399

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

• Չալքա, Հարպոյեան Ա. շէնք, 240 քառ. մետր տարածութեամբ, 3 ցնցասեցեակ, զոյգ հիւրասենեակ, ճաշասենեակ, 3 բաղնիք, եր ընտրասիտէ եւ յարակից մասեր: Շեմ. 03-783390 Էլ. 03-977968:

TANIA TRAVEL

Sodico Square - Rue de Damas
Tel: (01) 616555/677/8 - Fax: (01) 616661
Rue Sidani - Face Cinema Jeanne d'Arc
Tel: (01) 739679/82/3/4 - Fax: (01) 340473
Website: www.taniatravel.com

Տը ԵՒ ՄԵՐԻՆ ԺՈՂՈՎ ՓԵՐՊՐԵՑԱՆ

CHARTERS

PALMA DE MALLORCA
8 jours \$ 720

ESPAGNE, PORTUGAL & MAROC
7 prog. 8 a 15 jours \$ 955
Departs tous les Mardis

RHODES
8 jours \$ 355

MYKONOS
8 jours \$ 500
Departs tous les Lundis

Jel-ot-Dib 710305/6/7
913781/8/9/0/1/2/3/4 - Sidni 730870/736970
Jheil 942744 - 943366
Zahle 909947 - 902592
Tripoli 627759/602469 - Amjou 950076

ՇԱԱՍ - ՀԱՄԱՌՈՒՄ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՆ

Պաղեստինեան իշխանութեան ծրագրումի եւ միջազգային գործակցութեան հարցերու նախարար Մահմուտ ՀամաՌուտի եւ անոր հետ քննարկեց պաղեստինեան շրջաններէն ներս վիճակն ու Միջին Արեւելի խաղաղութեան համար միջազգային խորհրդածոյով մը գումարելու առաջարկը:

Հանդիպումէն ետք ՀամաՌուտ դատապարտեց պաղեստինեցի ժողովուրդին ղէմ գործուած խորհրդանշանաւոր արարքները: ան վերահաստատեց, որ խաղաղութեան արարական նախաձեռնութիւնը այն հիմն է, որ որդեգրած են արար ղեկավարները՝ Պէրլուքի իրենց վեհաժողովին եւ յանձնառու են անոր, որպէս հիմ՝ խաղաղութեան գործընթացին, որովհետեւ կը ճշդէ արարներու եւ խորհրդի յանձնառութիւններն ու պարտաւորութիւնները:

Ան յայտնեց, որ միջազգային ժողովին մասին երկուստեք համաձայն էին, որ պէտք է այդ նախաձեռնութիւնը ըլլայ անոր հիմը:

Շասս ներկայացուց պաղեստինեան շրջաններուն մէջ խորհրդի գործած բունարարքները, վերահաստատելով, որ «Մենք ներկայ պիտի չգտնուինք որեւէ միջազգային ժողովի, որուն ներկայ չեն ըլլար նաեւ Լիբանանն ու Սուրիան եւ ձեռք կառչած կը մնանք խորհրդանշանաւոր խաղաղութեան հետագումի եւ պաղեստինեցի գաղթականներու տունդարձի մեր պահանջներուն»:

Միջազգային ժողովին նպատակը պէտք է ըլլայ յստակ վերջ դնել խորհրդանշանաւոր արարքներուն եւ կերտել անկար պաղեստինեան պետութիւնը: Բայց նոյնքան կարեւոր է այդ ժողովին հիմն ու մեկնակէտը, որ պէտք է ըլլան միջազգային որոշումներն ու խաղաղութեան արարական նախաձեռնութիւնը: նոյնքան կարեւոր է, որ այդ ժողովը իր որոշումներուն գործնական արարքներու յստակ ժամանակացոյց եւ միջազգային երաշխիք ունենայ, ըսաւ Շասս:

ՊԸՐՐԻ ՆԱՏԱԳԱՀԵՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՆԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԳԻ ԺՈՂՈՎԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ նախագահեց խորհրդարանի գրասենեակի խորհուրդին ժողովին, որուն ընթացքին քննարկուեցան խորհրդարանին անհրաժեշտ վարչական հարցեր:

Նեպիի Պըրրի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Նորվեկիոյ նոր դեսպանին փոթորոյցային այցելութիւնը: Ապա ան ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթինը, որուն հետ քննարկեց շրջանային եւ միջազգային վերջին զարգացումները: Պորթին Պըրրիի փոխանցեց Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու նախագահներ Վլատիմիր Փուտինի եւ Ճորճ Պուշի վեհաժողովին, ինչպէս նաեւ Եւրոպական Միութեան եւ ՕՔՄԻ հետ Ռուսիոյ վեհաժողովներուն արդիւնքները:

Անդրադառնալով Միջին Արեւելքի կացութեան Պոլոթին ըսաւ, որ պէտք է անպայման ՄԱԿի Ապստական կան խորհուրդի որոշումը գործադրուի, վերջ դրուի վարչապետութիւններուն եւ խորհրդանշանաւոր արարքներուն, ինչպէս նաեւ խորհրդանշանաւոր քաշքուքներուն:

Պըրրի ցաւակցական հեռագիրներ ուղղեց Ալճերիոյ նախագահ Ապտյազիզ Պուսթֆիլիքայի եւ խորհրդարանի նախագահ Ապտյէ Բատէր Պըն Սալէհի, խորհրդարանի նախկին նախագահ Մոհամէտ Շերիֆ Մասախտի մահուն առիթով:

Պըրրի շնորհակարան հեռագիր մը յղեց նաեւ Հնդկաստանի խորհրդարանի նոր նախագահ Մանուհար Ճոշի, շնորհակարանութիւնով անոր պաշտօնը:


ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱԲԱԳՈՅ ՆՈՒԷՐԸ

**VIDEOԻ ԿԱՍ ԸՈՒ ՎՐԱՅ
VIDEO CLIPՆԵՐ**

ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԲԵԷԷԷԱՆ ՀԱՍ.
Շեմ. 01 / 261696, 03 / 250518

ONE SECOND IS ENOUGH...
Արաւսը կը Պուսառի երկուսուսուս Մը ՄԷՋ...



...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՐ ՆԵՐԿԱՅ ԵՐ ԱՄԷՆ ԵՐԿԱՅՈՒՄԵՆ.

ԱՖՏԻԼ AFHIL

Ալիտ-ի Ենթ, Բ. Յարկ, 7-ն. Ել Յարս. (01) 262231-242556-242557
Tmn. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆ

Հովանաւորութեամբ՝
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ
(Կաթողիկոս Սեօի Տամն Կիլիկիոյ)

Նախագահութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

Կազմակերպութեամբ՝
Հ. Մ. Ը. Մ. Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 9 Յունիս 2002ի երեկոյեան ժամը 6:00ԷՈՒ սկսեալ, Պորճ Համուտի Զաղաքապետարանի դաշտին վրայ:

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ 9ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանական 9րդ Ընդհանուր Ժողովը իր նիստերը գումարեց Անթիլիասի Մայրավանքին մէջ երէկ՝ 4 Յունիս 2002ին, նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին:

Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ ժամերգութիւն, գլխաւորութեամբ վեհափառ հայրապետին եւ մասնակցութեամբ միաբան հայրերու: Ապա վեհաբանի դահլիճին մէջ բացուեց կատարուեցաւ ժողովին Միաբանութեան անդամներու մեծամասնութեան ներկայութեամբ: Առժամայ եւ մնայուն դիւաններու ընտրութենէն ետք, վեհափառ հայրապետը խօսեցաւ իր բացման պատգամը, ընդգծելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան ծառայական ուղեգիծը, զոր ամփոփեց հետեւեալ հինգ կէտերուն մէջ. - Աղօթք, Սէր, Հնապանդութիւն, Հատարմունքիւն եւ Ծառայութիւն:

Միաբանական Ընդհանուր Ժողովին քննարկման բովէն անցաւ Միաբանութեան տնօրէն ժողովի անցնող երեք տարուան աշխատանքային տեղեկագիրը, որ կ'ընդգրկէր ժողովական, կրթական, մտաւորական, շինարարական ու այլ մարպերը Միաբանութեան անդամներու գործունէութեան: Տեղեկագիրին մէջ ներկայացուած էին նաեւ կաթողիկոսարանի պանսպան բաժանմունքներուն ու տեսչութեանց կատարած աշխատանքները եւ յառաջիկայ ծրագիրները:

Բարձրօրէն գնահատուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի մարդակերտումի առաքելութիւնը եւ անցնող տարիներուն ունեցած հունձքը ե՛ւ կուսակրօն, ե՛ւ անուսնացեալ քահանաներու պատրաստութեամբ: Գովեստով յիշուեցան Դպրեվանքի ուսանողութեան կրթական կեանքէն ներս արձանագրած յաջողութիւնները, եւ գնահատուեցան յառաջիկայ ծրագիրները, կրթական այս կարելոր օճախը զօրացնելու նպատակով:

Միաբանական Ընդհանուր Ժողովը հերթաբար քննարկեց կաթողիկոսարանի վանական բաժանմունքներուն՝ թանգարան, մատենադարան, տպարան ու այլ տեսչութեանց կատարած աշխատանքները եւ բարձրօրէն գնահատեց տարուած բժախնդիր աշխատանքները: Կարելորութեամբ նկատի առնուեցան Մայրավանքին թէ Պիքֆայայի վանքէն ներս տեղի ունեցած շինարարական հսկայ աշխատանքները, որոնք կ'ընդգրկեն Մայր տաճարը, Պիքֆայայի մատուռը, Նահատակաց Յուշարձան Մատուռը, Դամբարանը, Վարդապետանոցի եւ եպիսկոպոսարանի նորակառոյց շէնքերը եւ այլ շինարարութիւններ: Այս գծով շինարարական նոր ծրագիրներ եւ ներկայացուեցան, որոնց պիտի ձեռնարկուի յառաջիկայ ամիսներուն:

Ամբողջ օրուան մը վրայ տարուած չորս նիստերու ընթացքին, միաբան հայրեր իւրապատուկ նախանձախնդրութեամբ ու շինիչ գաղափարներով իրենց մտահոգութիւնները եւ առաջարկները ներկայացուցին ժողովին, ընդգծելով ժողովուրդի կեանքէն ներս մեր եկեղեցւոյ անմիջական ներկայութիւնը, եւ երիտասարդութեան մասնակցութիւնը անոր կեանքին: Սերկայ փոխուղ դարու պայմաններուն համապատասխանող մօտեցումներու որդեգրումը անհրաժեշտ նկատուեցաւ, իբրեւ եկեղեցւոյ առաքելութեան համար հիմնական ուղեգիծ:

Ի վերջոյ վեհափառ հայրապետը եզրափակիչ պատգամով կապմակերպ աշխատանքի կոչ ուղղեց բոլոր միաբաններուն, շեշտելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ինքնանուիրումի ու ծառայութեան ոգին, որ մեծագոյն խորհրդանիշն է նուիրապետական այս Ա. Արքին:

Ի՞ՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Ինչպէս նախորդ օր, երէկ եւս լիբանանեան բոլոր օրաթերթերը իրենց խորագիրները կ'ընդունան արդիւնաւոր էին Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութեան արդիւնքներուն շուրջ տարբերակները:

«Նախար» օրաթերթը իր առաջին էջին մէջ կը գրէր. «Ընտրութեան արդիւնքներու անակնկալ փոփոխութիւնը կրնայ պատճառ դառնալ քաղաքական սուր տագնապի. Հրմայա գիւղի սնտուկի ստեղծած տագնապը հասաւ Պապատայի ապարանք»:

«Ընտրութիւններէն երեք օր անցած է արդէն, բայց Մեթնի մէջ

յաջողած թեկնածուին անունը կը մնայ անտեսան քաղաքական բազմակողմանի շփումներ տեղի կ'ունենան դիրքերու կարծրացումէն խուսափելու համար: Ներքին գործոց նախարարութիւնը ստացած է Միւսա Մըրի յաղթանակը հաստատող որոշումը, բայց զայն չի հրապարակէր. ընդդիմութիւնը բաց նիստերու մէջ է, իսկ Պշարա եւ Ապու ժառուէ եպիսկոպոսները երեկոյեան Պապատայ-Գեյեջին», կը նշէ «Տիար»:

Միւս կողմէ, «Մուսթաֆա» օրաթերթին յորդումը կը կրէր հետեւեալ խորագիրը. «Ընդդիմութիւնը կառչած կը մնայ Կապրիէլ

Մըրի յաղթանակին եւ իշխանութիւնները կը պզուցանէ արդիւնքները խեղաթիւրելէ: Մեթնի արդիւնքները կը սպասեն ներքին գործոց նախարարութեան յայտարարութեան»:

Մեթնի այս մասնակի ընտրութիւններուն արդիւնքներուն մասին «Սաֆիր» հետեւեալը կ'ըսէր. «Մեթնի երեսփոխանական արտոնի ճակատագիրը առկա կը մնայ, երկու Մըրերը յաղթական են, բայց ներքին գործոց նախարարութեան Մըրը լուր կը մնայ. տագնապը փոխադրուեցաւ Պապատայ եւ ընդդիմութիւնը կը սպառնայ

Շար.՝ էջ 10

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՅ ԱՐԱԲ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց Պէյրութի փաստաբաններու սենտիքայի նախագահ Ռեմոն Շտիտը եւ Արաբ Փաստաբաններու Միութեան ընդհանուր քարտուղար եւ նախկին նախարար Ֆարուք Ապու Իսան, որոնց հետ քննարկեց երկրին ընդհանուր

վեճակը եւ շրջանային զարգացումները: Հանդիպումին ընթացքին նախագահ Լահուտ Ապու Իսան պարզեցաւ իր Մարիւնի շքանշանով, որը կ'ընդունուի իր պաշտօնը բժախնդրութեամբ կատարելու անոր ճիգերին, որոնց հետ քննարկեց երկրին ընդհանուր

նախի զօրակցութիւնը համարաբարական որեւէ միութեան կամ կազմակերպութեան գործունէութեան: Ապու Իսան հանդիպումէն ետք կատարեց յայտարարութիւն մը, որուն մէջ ըսաւ, որ «այս սրտբաց եւ յարգալից ընդունելութիւնը արար բոլոր փաստաբաններուն կը պատկանի»:

Իր կարգին, Շտիտ նկատել տուաւ Ապու Իսանի ի գործ դրած ջանքերը, որոնց շնորհիւ միութիւնը վերելք արձանագրեց:

Նախագահ Լահուտ Մուսամմար Քազաֆիէն ստացաւ շնորհակարանական հեռագիր մը Մոհամմաթ մարգարէի ծննդեան տարեդարձին առիթով: Իր կարգին, նախագահ Լահուտ Ալեքիթոյ Պոլիթեքնիքայի յղեց ցաւակցական հեռագիր մը, խորհրդարանի նախկին նախագահ Մոհամմաթ Շերիֆ Մասաաթիէի մահուան առիթով:

ՔՈՒԷՅԹՅԻ ԳԵՐԻՆԵՐՈՒ ԶԱՆՉՆԱԽՈՒՄԸ ԱՅՅԵԼԵՅ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ

Գերի ինկած կամ անհետացած քուէյթցիներու ազգային յանձնախումբի պատուիրակութիւնը, որ կը գտնուի Լիբանան՝ շէյխ Մալէմ Սապահ Սալէմ Սուպահի վերաբերութեամբ, այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիին: Ներկայ էր նաեւ Լիբանանի մէջ քուէյթցի Ռեմոն Ալի Սալէմի Սալիտը:

Համընդան խոստում ստացած է քուէյթցի գերիներու հարցը հետապնդելու, աշխատանքին առընդէմ կարգ մը հարցեր: Շէյխ Սալէմ Սուպահի յայտարարեց, որ վարչապետը նաեւ արտքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտին: Հանդիպումին ներկայ էին նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամմաթ Իսան եւ արաբական հարցերու պատասխանատու Հիշամ Տիմաշիէ:

Հանդիպումէն ետք շէյխ Սալէմ Սուպահ յայտարարեց, որ նախարար

Մ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԵՅՐ ՏԱԵԱՐԻՆ ՄԷՉ ԳՈՒԵՒՈՐ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԶԱՄԵՐԳ՝ ԻԶԱՊԵԼ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆԻ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ



Միջազգային բազմաթիւ մրցանակներու դափնեկիր, աշխարհահռչակ սփարան Իվապէլ Պայրագտարեան, ընկերակցութեամբ Մեղրիկ Ծ. վրդ. Բարիքեանի ղեկավարած լաւաբար նուագախումբին, երէկ երեկոյեան ժամը 8:00ին, Անթիլիասի Մայրավանքի Մ. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ հարիւրաւոր երաժշտաւէր հանրութեան ներկայացուց իր շարականները եւ մեղեդիները: Գեղարուեստական իւրապատուկ եւ վերացական վայելքի պահեր ըմբռնելու անսպասելի քաղաքացիական յանձնարարութեան ղեկավարը Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին խորհրդով անոնց:

Քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի կազմակերպութեամբ կազմուած հոգեւոր գեղարուեստական այս համերգը կը վայելէր Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին խորհրդով անոնց: Քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի կազմակերպութեամբ կազմուած հոգեւոր գեղարուեստական այս համերգը կը վայելէր Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին խորհրդով անոնց:

Համերգին ներկայ էին Արամ Ա. Կաթողիկոսը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ բոլոր միաբան հայրերը, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Քառասույր դեսպան Հայկ Սարաֆեան, հայ երեսփոխաններ, ազգային անձնատրութիւններ եւ մեծ թիւով երաժշտաւէրներ:

Երեկոյին բացուեց կատարեց Մաշտոց վրդ. Չօպանեան, որ ներկայ էր ողջունելէ ետք ըսաւ, թէ համերգին ընթացքին պիտի երգուի մերոյ աշխարհի խաղաղութեան, սիրոյ եւ համերաշխութեան համար: Ապա Իվապէլ Պայրագտարեան իր թաւշեայ եւ մեղմորէն թրթռացող ձայնով ներկայացուց «Ով պարտիպան», «Ուրախ լը, եկեղեցի սուրբ», «Սուրբ Աստուած», «Բայց մեկ, Տէր», «Նոյն եւ նման», «Ո՛ր ես, մայր իմ», «Նոր ծաղիկ», «Լոյս վուարթ», «Ով վարձատար», «Սյոր ձայնն հայրական», «Տէր ողորմեա», «Սմէն. հայր սուրբ» եւ «Տէրունական աղօթք» շարականներն ու մեղեդիները, ընկերակցութեամբ 11 լաւաբար նուագախումբին, որ իր կարգին նուագեց «Սյոր դասք հրեշտակաց», «Որ կապ մեցիր սեղան խորհրդոյ», «Սիրտ իմ սասանի», «Յարեաւ Աստուածն հրաշապէս», «Տօն մը», «Սայլն այն իջանէր» հոգեւոր երգերը: Կարգ մը շարականներու սփարան մենագրչուիին ընկերացան Չարեհեան դպրեվանքի սաները:

Համերգին փակման իօսքը արտասանեց Արամ Ա. Կաթողիկոս, որ գնահատեց «Չարեհի փոքր եկեղեցիէն մինչեւ միջազգային բեմերը բարձրացած Իվապէլ Պայրագտարեանը»: Ան նշեց, թէ մենագրչուիին իր ձայնին եւ մեկնաբանութեան ընդմէջէն իւրապատուկ մտով կը իօսի հայկական ազգային արժէքներուն մասին: Ան շնորհատրեց եւ գնահատեց նաեւ համերգի կազմակերպիչ յանձնախումբը՝ յանձնառու Չարեհեան: Այնուհետեւ, լաւաբար նուագախումբը եւ անոնց ղեկավարը՝ Մեղրիկ Ծ. վրդ. Բարիքեան, դպրեվանքի սաները եւ համերգի նախագահները, որոնք որեւէ արհիթ կ'օժանդակեն մեր ազգային կեանքի կարիքներուն: Ն. Բ.

ԱՂԱՍԱՐԳԻՄԵԱՆ ՀԱՍ.

MICROWAVE DIGITAL 100\$
ՃԱՄԱՆԱԿԻ
ԵՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ
+ ԶՈՒԿՈՎ ԱՐԴՈՒԿ ՆՈՒԵՐ

Պուրճ Համուտ - Չարեհապետարանի հրապարակ
ԵՆՈԱՉԱՅՆ՝ 01-241000
2րդ մուտքը, Սանքըր Պլանցըրոյն:
Կառատուըր ապահովուած:

Բ. մասնաձիւղ. - Home Marketի մէջ, Սթալլայի վերջաւորութեան, Պիքֆայայի ձամբուն վրայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԻՐ ԴՐԱՆՏԱՎԱՅՐ ԱՆԱԿԵՐԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ԿԱՉՈՒՐՄԱՆ ԱՆԿԱՏԱՆԱՆ ԶՈՅՁ ԶԵՐԱՊՏՈՅՆԵՐ ԴԵՊՈ

ՄԵԻՆԵ ԵՒ ԱՐԶԻՆ
Ա. թէ 29 ՅՈՒՆԻՍ. Բ. թէ 30 ՕԳՈՍՏՈՍ 22 ՕՐ:
10 ՕՐ ՊՏՈՅՑՏԵՐ ՕՐԱԿԱՆ 4 ԱՆՊԱՍ ՈՒՏԵԼՈՎ, ԿԻՉԱՆ, ՏՈՒՐԵՐԸ, ՕՐԱԿԱՆ ՏՈՍՄԸ

Փինքը
Մինչեւ 12 տարեկան՝ 399 \$, 12-15 տարեկան՝ 495 \$,
16-19 տարեկան՝ 595 \$, 19-26 վեր 780 \$

Մեղրեան կրթական Հաստատութեան ամպլորի հաճեցիկ աօթով, շրջապատու ղեկի կիրքու 14-17 Յունիս: Փին միայն 1991-92 սկսեալ:

Ամէն օր առտու եւ իրիկուն՝ մեր գրասենտակին առջեւ, շեղ օրընթացով ղեկի Հայտ, Դամասկոս եւ Լաքաք, 6 ժամ սկսեալ:

ԿՅԱԿՉ. ԱՆՏԵՄԱՆ ԹՈՒՐՉ
ԵՆ. 01/261177, 01/240654 եւ 03/233978
Գործակցութեամբ՝ TRANSPORT & TOURISM SERVICES S. A. L.

IGOL MOTOR OIL FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԶԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԱԿՆԱՐԿ

ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆԸ

Քերթը, իր 31 Մայիսի թիվին մէջ անդրադարձած է Թորոնթոյի ՀՕՄԻ երկրորդական վարժարանի եւ երիտասարդական մարզամշակութային համալիրի շինութեան համար կազմակերպուած հանգանակային ճաշկերոյթին, որուն ընթացքին հանգանակութեան գումարը հասած է մէկ միլիոն 371 հազար տոլարի (շուրջ կարգալ կողքի սիւնակներով):

Լուրը ինքնին, ըստ ամենայնի, գոտեպնդիչ է Քանադայի պէս խոստմնալից գաղութի մը համար: Սփիւռքեան ձուլումի հայակուլ մթնոլորտի մէջ, մանաւանդ Հիւսիսային Ամերիկայի գաղութներուն համար, կենսական կարեւորութիւն կը շարունակեն ներկայացնել հայապահպանման երկու յեռակետերը՝ հայ դպրոցը եւ հայ եկեղեցին: Եւ այս նախաձեռնութեամբ՝ Քանադայի հայութիւնը կու գայ հաստատուելու իր կրթական կեանքը, եւ անոր ընդմէջէն հայապահպանման ճշխատանքը ամուր հիմքերու վրայ դնելու իր վճարակամութիւնը:

Սակայն գուտ հայապահպանական մտահոգութեան անդին, այս նախաձեռնութեան մէջ անհրաժեշտ է տեսնել ուրիշ երեւոյթներ, որոնք ուսանելի են նաեւ լիբանանահայ գաղութին համար:

Այս հանգանակութիւնը ամենէն առջ ցոյց կու տայ հայութեան հաւատքը կրթութեան հանդէպ: Հայ ժողովուրդը, իր պատմութեան ամենէն մուր ժամանակաշրջաններուն անգամ արժանի մատուցած է կրթական աշխատանքին՝ գիտելով, որ իր փրկութիւնը այլազան միջոցներու կարգին կը կատարուի նաեւ լուսաւորելու եւ արդիականացման ուղին բռնելու ճամբով: Իսկ այս մտածողութիւնը, մանաւանդ այսօր, համաշխարհայնացման յորձանուտին մէջ, աւելի քան որեւէ ժամանակ կը պահէ իր ամօթեղանակութիւնը:

Մտածում մը, սակայն, մտահոգութիւն կը պատճառէ: Շատ ժամանակ մեզի չի բաժնէր այն օրէն, երբ Լիբանանի հայկական դպրոցներուն մէջ պիտի կատարուին ամառային փառերի քննութիւններ եւ այդ դպրոցները պիտի փակեին իրենց դռները՝ նախապատրաստուելու համար յառաջիկայ տարի իրենց դիմաց ցցուած մտահոգութիւններուն դիմագրասման:

Արդէն իսկ անվիճելի է այն իրողութիւնը, որ յառաջիկայ տարեմուտը եւս մեր դպրոցները պիտի դիմաւորեն դժուարութիւններով, որոնք նման են այս տարուան ընթացքին «Ազգակ» մէջ լոյս տեսած յօդուածներուն մէջ նշուածներուն: Անոնք թերեւս այլ այս տարուան դժուարութիւններուն ժառանգութիւնը ըլլան՝ զանազան մակարդակներու վրայ:

Արդ, կ'արժէ այս պայմաններուն մէջ կատարել այն դիտարկումը, որ կը բխի քանադա-հայութեան գովելի նախաձեռնութեան առթած մթնոլորտէն: Մինչ նորաստեղծ գաղութ մը թափ կու տայ դպրոցաշինութեան աշխատանքին, մինչեւ հիմա ալ տակաւին սփիւռքահայութեան սիրտը նկատուող լիբանանահայ գաղութը կը տնքայ կրթական տագնապի օր աւուր ծանրացող բեռին առջեւ:

Թորոնթոյի Հայ Կեդրոնին մէջ հաւաքուած շուրջ 500 հայորդիները այս օրերուն կրթութեան անհրաժեշտութեան նկատմամբ ցուցաբերեցին պատասխանատուութեան բարձր գիտակցութիւն: Այս գիտակցութեան ամենուրեք սփռումը պէտք է դառնայ համահայկական գերիքնդի:

Ժ. ՅԱՎՈՒՐԵԱՆ

ԹՈՐՈՆԹՕ

1 ՄԻԼԻՈՆ 371 ՀԱԶԱՐ ՏՈՒՆԱՐ՝
Ի ՆՊԱՍՏ ՀՕՄԻ ԴՊՐՈՑԱՇԻՆԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Շարաթ, 25 Մայիսին Թորոնթոյի Հայ Կեդրոնի արահին մէջ տեղի ունեցաւ դպրոցաշինութեան եւ մարզամշակութային երիտասարդական համալիրի շինութեան հանգանակային ճաշկերոյթի եւ Հայաստանի Հանրապետութեան Ցճամեակի տօնակատարութիւն:

Ներկայ էին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Քանադայի կաթողիկոսական փոխանորդ Նաթակեպոս Թակոբեան, Հայ Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Շահէ Մ. վրդ. Փանոսեան, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Եղիա Մ. վրդ. Գիրէշեան, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ վեր. Եսայի Սարմազեան, Պոսթընի Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ վեր. Պերնար Կէօքէօզեան, Հ. Յ. Դ. Քանադայի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Տէր Նաչատուրեան, ՀՕՄԻ կեդրոնական վարչութեան անդամներ Թաթուլ Ստեփան Գափազեան եւ Հուրի Նաճարեան, պատկան Ստեփանեան ներկայացուցիչներ եւ շուրջ 500 ներկաներ:

Ճաշկերոյթը սկսաւ քանադական եւ հայկական քաղաքներու ունկնդրութեամբ՝ ՀՕՄԻ միջնակարգ դպրոցի շրջանաւարտ Նայրի Մաճարեանի կատարողութեամբ: Ապա, նոյնպէս ՀՕՄԻ միջնակարգէն շրջանաւարտ Նաթակէ Ճիկեղճեան կարգաբաշխ խօսքը:

Նաթակէ Եսոս. Թակոբեան կատարեց ճաշի սեղաններուն օրհնութիւնը: Սինֆոնիա Թորոնթօ քառեակը՝ գլխաւորութեամբ Մարտիկ Պազարեանի, մատուցեց հայկական եւ մեղմ երաժշտութիւն:

Օրունք քանադաս էր ՀՕՄԻ ամէնօրեայ վարժարանի նախկին տնօրէն Մարգար Շարապիսեան, որ խօսեցաւ Հայաստանի անկախութեան կեդրոններու՝ Հայ եկեղեցիներու եւ Հայ դպրոցներու կարեւորութեան մասին: Ան շնորհ, որ այդ կեդրոններուն շնորհիւ գաղութները կը մնան աշխուժ եւ կենսունակ, միշտ պատրաստ՝ քաղաքականապէս եւ տնտեսապէս օժանդակելու Հայաստանին:

Նայրի Մաճարեան երգեց «Սարդարապատ» եւ «Գետաշէն» երգերը՝ դաշնակի ընկերակցութեամբ վարժարանի Մարտիկ Պազարեանի: Այնուհետեւ խօսք առաւ Յակոբ Տէր Նաչատուրեան՝ իր գնահատանքը արտայայտելով Ստեփանի եւ Թորոնթոյի մէջ կատարուող դպրոցաշինութեան աշխատանքներուն, որովհետեւ այդ ափերուն վրայ հայապահպանման գլխաւոր բերդերէն մէկն է Հայ դպրոցը:

Բեմ հրաւիրուեցաւ Նաթակէ Եսոս. Թակոբեան, որ անդրադարձաւ Հայ Կեդրոնի, Հայ վարժարանի եւ Հայ եկեղեցւոյ շինութեան հնգաբուններուն, որոնք իրագործուեցան գաղութի կարգ մը «խնթ»երու յանդուգն որոշումներուն շնորհիւ: Ան ըսաւ, որ «խթ» ծնողներ, մեր առաջնահերթ պատասխանատուութիւնը նախ եւ առաջ մեր գաղութներուն հանդէպ է: Անոնց ապահով միջավայր մը տալն է, միջավայր մը, որ պիտի նպաստէ մեր գաղութներու ընկերային դաստիարակութեան եւ պիտի ընդարձակէ անոնց հոգեկան-մտաբանական զարգացման հորիզոնները: Միջավայր մը, որ անոնք պիտի կարենան լաւագոյնս արտայայտել իրենց հայկական ազգային պատկանելիութիւնը եւ զայն լաւապէս հաւատարակելու քանադական իրենց քաղաքացիութեան հետ:

Ապա տեսաբերիցով ցուցադրուեցան ՀՕՄԻ ամէնօրեայ վարժարանի երկրորդական բաժինի եւ մարզահամալիրի քարտէսները՝ վարժարանի տնօրէն Բաֆի Տուտազլեանի բացատրութեամբ: Հայ Կեդրոնի երիտասարդութեան կողմէ խօսք առաւ ՀՕՄԻ միջնակարգ դպրոցէն շրջանաւարտ փաստաբան Շահէ Միւրաբեան, որ խօսեցաւ Հայ երիտասարդութեան համար համախմբումի միջավայրի մը կարեւորութեան մասին, որպէսզի Հայ երիտասարդութիւնը կարենայ իր ներդրումը ունենալ Հայաստանի անկախութեան եւ Հայ Դատի աշխատանքներուն մէջ՝ զինուած արդիական գաղափարներով եւ գիտութեամբ:

Սկսաւ հանգանակութիւնը. բոլոր միութիւնները, կազմակերպութիւններն ու անհատները մասնակցեցան հանգանակութեան: Հանգանակուած գումարը հասաւ մէկ միլիոն 371 հազար տոլարի:

Հանգանակութեան աշխատանքները կը շարունակուին:

ԱՆՑԵԱԼԻՆ
ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ժամանակագրութեան ակնադղիչը չէ՞ եղած արդեօք՝ հնագոյն ժամանակներուն Պեհիստունի մեհենագիր արձանագրութիւններէն առաջ իսկ, մարդ էակին խորը բոյն դրած ցանկութիւն մը փրկելու ժամանակի ափերուն եւ առաջներուն վերայ լքուած յիշատակները: Փրկելու պահանջը՝ ըսելու համար պարզ բան մը կարօտի շնորհով: Այսպէս... Ընդհանուր օրէնքն է:

մնացեւ էին իր բոլոր մտասեւեռումները, հոգեկան խոյանքները՝ տիրապետելու իր ժամանակին: Առաւելութիւնը անուրանալի բացայայտ է: Եւ հարկ է, որ մէկը բանար վարագոյրը եւ բառերով փոխարինէր անցեալը, որպէսզի կեանքի կոշտէն յիշատակները՝ ապրուած նաեւ ուրիշներու կողմէ: Կոշտէնի սրտազին հրաւիրագիր մըն է հրատարակութիւնը այս հատորին, գերագոյն ժեսքը ախոյեանին, մասնաւորաբար ուղղուած այն բոլոր անձերուն, երջց ու կրտսեր, որոնք ճանաչեցին իրենց մօտէն եւ հեռուէն: Ան դուրս կու գայ ինքնին այնքան ժողովրդականութիւն վայելող մարզաձեւի մը (Ֆուլթայոլ) շրջագրէն՝ բնականաբար խօսելով նաեւ այդ մարզաձեւին առնչուող գնահատման ընկերային կապերուն մասին:

Երբ մարդ իր յուշերը զրի կ'առնէ ապահովելով իր յիշողութեան, յետագայում նախաձեռնում վերաբարձր կ'ընէ անցեալ օրերու ղեկավարներուն, տեսակ մը հաշուեկէշուր իր կեանքին: Գրանցումին եւ այդ ղեկավարներ միջեւ տեղադրուած է ժամանակի տարածք մը: Յուշագրողը հեռուէն կը դիտէ գնահատման ընկերային կապերով կարօտի գոյններով:

Ֆուլթայոլի յուշագրութիւնը հիմնովին կը տարբեր ընթացիկ յուշագրութիւններէ: Ան իր էջերը կը քաղէ իր օրագրութեան գիրքէն, կոկիկ գեղեցիկ գիրք մը՝ տասնամեակներու երկայնքին գուրգուրանքով պահուած: Ան մեզ կը փոխադրէ ուղղակիօրէն այժմեականութեան մէջ իր ամէնօրեայ ապրումներուն: Ժամանակը իր դրոշմը չէ դրած պատճէնին վրայ: Առձեռն կոկիկ մատեան մը, ուր պահ մը դրուած է քանի ազնուական սիրտը...

Թարմութեան գաղտնիքը ասոր մէջ կը կայայտուի, տեսակ մը մատեան, որ գրի առնուած է տասնամեակներ առաջ, ապա պահ դրուած անկիւն մը, որ լոյս աշխարհ կու գայ տարիներ ու տարիներ ետք, գրեթէ առանց վերանայումի: Եւ հիանալին իր գործը, իր պաշտօնը, իր առաքելութիւնը չէ՛նք դերակատարէն, կատարելու է իր գրքը:

Գամ ըլլալով գրաւոր վկայութիւն մը կը տրուի Հ.Մ.Լ.Մ.Ի կողքին մրցակից խոնարհութեան պայմաններուն շուրջ: Միանականութեան զգացումը հասնում է, անկեղծ: Ան կը մտածէ ու կ'ապրի իր բնական մտածելի եւ ապրելի առաջ իր բնական Հ.Մ.Լ.Մ.ական:

Վարդիվառ Յովհաննէսեան, աւելի ժողովրդականացած, հանրածանօթ միմիայն վարդիվառ մատեան մը, ուր պահ մը դրուած է քանի ազնուական սիրտը...

Վարդիվառ Յովհաննէսեան, աւելի ժողովրդականացած, հանրածանօթ միմիայն վարդիվառ մատեան մը, ուր պահ մը դրուած է քանի ազնուական սիրտը...

Եթէ սովորական յուշագրութիւն մը ըլլար խնդրի առարկան, ընթացողը առանց մեծ թեւեռութեան պիտի զգար ու չափէր այն հեռուութիւնը, որ գոյացած պիտի ըլլար ընդմէջ ղեկավարներ եւ հեղինակին, ստիկա պիտի դիտէր ու դատէր այդ ղեկավարը այսօրուան նայուածքով:

Յուշագրողը իր յուշագրութեան մէջ կը փոխանցէ անեղծ, շերտ զգացումներով: Գերա-մարդկային կու գայ իր յուշագրութեան մէջ եւ տողներուն միջեւ: Հրաշալիքներու զիջում մը ո՛չ անպայման, բայց գրեթէ անոնց հանդէպ հանդիմանական խոնարհութեամբ, խոյանք ու խորտակում, բայց միշտ ու անպայման թուիք... Երեւոյթ է վարդիվառ՝ իր անսակարկ, ամբողջական նուիրուածով: Բացառիկ ժողովրդականութեան տիրապետութեան արտադրանք է իր փայլուն ասպարէզով, վաղ երիտասարդութեան, Չճ տարեկանին, դաշտին վրայ, խաղի ընթացքին ոտքէն ստացած բիրտ հարուած մը վերջ կու տայ իր ասպարէզին՝ զինք այնուհետեւ զրկելով նոր խոնարհութեան մասնակցութիւն բերելու կարելիութիւններէ:

Այս պարագային հասուն տարիքի մէջ գտնուող մարդը չէ՞, որ տարիներու հեռուութեան մէջ կը դիտէ անցեալը: Վկայող ղեկավար մէջն է, եւ իրեն հետ նաեւ՝ ընթացողը: Դէպքերը նկարագրուած չեն դուրսէն դիտողի մը, մարգասէր հանդիսատեսի մը կողմէ, այլ դիտուած՝ յաղթանակներու կերտիչի մը կողմէ: Երեւոյթը բոլորովին եզակի է, օրը օրին գրի առնուած թղթակցութիւն մը՝ սահմանադրական եղանակ ներկայով: Հարագատ օրագրութիւն մը՝ հայանցիկ վերանայումով հրատարակութեան հեռանկարին մէջ, ներդաշնակ համարողութիւնով:

Երբ կը դարձնէք վերջին էջը եւ կը փակէք ընթացողը, այնուհետեւ օրեր ետք, հաւաքական փոթորկումներէն, յուսալքումներէն եւ շքեղ թղթերէն ետք, ձեր քիմքին վրայ պիտի յամենայ զարդը համ մը կարօտին նմանող, կաղնեփայտէ տակաւններուն մէջ գիւղեստին գացող Հայ մարդիկներուն, Հ.Մ.Լ.Մ.ի ֆուլթայոլի խոնարհութիւնը:

Ֆուլթայոլի խաղերու լուսանցքին վրայ յիշատակելի դրուագներ կը նպաստեն մեր հաւաքական յիշողութեան մէկ մասը փրկելու՝ շրջագրելով իր ժամանակին մէջ

հարագատ միջավայրը, ուր գարգապաւ լիբանանեան ֆուլթայոլը՝ գլխաւորութեամբ Հայ մարդիկներուն: Շահեկան տուեալներ, որոնք կը վկայեն մեր քաղաքական բարեբրտն եւ ընդհանուր կացութեան զարգացումներուն մասին, ֆրանսական հոգատարութեան օրերէն մինչեւ անկախութիւն եւ անկէ ետք:

Այդպէս էինք մենք: Այդպէս էր Լիբանան:

Ի՛նչ սիրելի ղէմքեր կը տողանցեն՝ ոգեկոշուածութեամբ ղէկավարներուն, սիրելի ղէմքեր, որոնք ձայնը մինչեւ այսօր կը հնչէ տակաւին հարագատ շնորհով շատերու կանչին խորը, եւ որոնք դակնութիւն վայելող մարզաձեւի մը (Ֆուլթայոլ) շրջագրէն՝ բնականաբար խօսելով նաեւ այդ մարզաձեւին առնչուող գնահատման ընկերային կապերուն մասին: Թերեւս առաջին անգամ ըլլալով գրաւոր վկայութիւն մը կը տրուի Հ.Մ.Լ.Մ.Ի կողքին մրցակից խոնարհութեան պայմաններուն շուրջ: Միանականութեան զգացումը հասնում է, անկեղծ: Ան կը մտածէ ու կ'ապրի իր բնական մտածելի եւ ապրելի առաջ իր բնական Հ.Մ.Լ.Մ.ական:

Վարդիվառ Յովհաննէսեան, աւելի ժողովրդականացած, հանրածանօթ միմիայն վարդիվառ մատեան մը, ուր պահ մը դրուած է քանի ազնուական սիրտը...

Վարդիվառ Յովհաննէսեան, աւելի ժողովրդականացած, հանրածանօթ միմիայն վարդիվառ մատեան մը, ուր պահ մը դրուած է քանի ազնուական սիրտը...

Եթէ սովորական յուշագրութիւն մը ըլլար խնդրի առարկան, ընթացողը առանց մեծ թեւեռութեան պիտի զգար ու չափէր այն հեռուութիւնը, որ գոյացած պիտի ըլլար ընդմէջ ղեկավարներ եւ հեղինակին, ստիկա պիտի դիտէր ու դատէր այդ ղեկավարը այսօրուան նայուածքով:

Այս պարագային հասուն տարիքի մէջ գտնուող մարդը չէ՞, որ տարիներու հեռուութեան մէջ կը դիտէ անցեալը: Վկայող ղեկավար մէջն է, եւ իրեն հետ նաեւ՝ ընթացողը: Դէպքերը նկարագրուած չեն դուրսէն դիտողի մը, մարգասէր հանդիսատեսի մը կողմէ, այլ դիտուած՝ յաղթանակներու կերտիչի մը կողմէ: Երեւոյթը բոլորովին եզակի է, օրը օրին գրի առնուած թղթակցութիւն մը՝ սահմանադրական եղանակ ներկայով: Հարագատ օրագրութիւն մը՝ հայանցիկ վերանայումով հրատարակութեան հեռանկարին մէջ, ներդաշնակ համարողութիւնով:

ՆԱԶԱՐԵԹ ԹՕՓԱԼԵԱՆ Փարիզ

ԱՅՆՃԱՐ

ԼՕԽԻ «ԱՂԹԱՄԱՐ» ՄԱՍՆԱԾԻՒՂԻ
60ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

Շարաթ, 18 Մայիսին ԼՕԽԻ «Աղթամար» մասնաճիւղը մեծ շուքով նշեց իր հիմնադրութեան 60ամեակը՝ խրախճանք - հանդիսութեամբ մը:

Դարասկիզբին, ցեղասպանութենէն ճողոպրած, բայց հերոսամարտի յաղթական փառապատկեր ճակտին, Մուսա Լեւոն հայութիւնը ինքզինք զտաւ երկրորդ հերոսամարտ մը մղելու հարկադրանքին դիմաց:



Առաջնորդ սրբազանը կը փոխանցէ իր պատգամը:



Նարար ձեռքը, 60 տարիներու ընթացքին, ճահիճը վերածեց մարդավայել, աւելին, հայավայել, կանաչագորդ ու տիպար գիւղաքաղաքի մը: Իրագործում մը, որ վկայութիւնն ու ճառագայթող փաստն է քաղաքակրթութեան ժողովուրդի մը հարագատ բեկորը ըլլալուն... «Այստեղ հայութիւն կայ»:

Նարար ձեռքը - հանդիսութեան ներկայ էին Լիբանանի Ծար.ը՝ էջ 8 ԼՕԽԱԿԱՆ ՄԸ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ
ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
«Աղակ»-ի մէջ ազգային կամ տնտեսական ծանուցումներ հրատարակել կամ փաթեթակազմ կր խնդրուի ծանուցումին բնագիրը ընթացողի գիրով (հաստատութեանց պարագային՝ մախրատարաբար պաշտօնակա թղթով վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Աղակ»-ի ծանուցումներու գրասենյակը:

Միջապգային Քաղաքական Կեանք

ԽԵՆԹ ՄԱՐԳԻԿ ԿԸ ՊԱՏԿԵՐԱՑՆԵՆ ԱՆԵՐԵՒԱԿԱՅԻՆ

2002ի Մոնտիալը, իրապես համաշխարհային միակ մարզածեղևի տոնահանգն էր, այս օրերու կը յափշտակուի միլիտարու մարդոց կողմէ, Պուէնոս Այրեսէն Նոմ (Ալաբա), Քիւնզա-սայէն Քիլբէնցի (Իրլանդա): Հարաւային Քորէա-յէն եւ Ճափոնէն երբեք հազար մղոն հեռու, կարն տարածութիւն մը կորիզային գեներու համար, աւելի մահացու մրցակցութիւն մը կը կատարուի Հնդկաստանի եւ Փաքիստանի միջեւ: Մրցակցութիւնը կը սպառնայ կորիզային աղէտ մը պատճառ-ով, ինչ որ կրնայ խլել միլիոններու կեանքը, լուրջ հետեւանքներ ունենալով համայն աշխարհին:

Աշխարհին համար անցնող շաբաթավերջի ամէ-նէն զարմանալի դէպքը պարզապէս Հնդկաստանի եւ Փաքիստանի մէջ մեծածախ գորքի եւ զինամթ-թերքի գորաշարժը պէտք է ըլլայ, այլ նաեւ՝ անոնց հետեւանքները: Երկու պետութիւններն ալ վտան-գաւոր երազներ կը փայտային:

Հնդկաստանի ղեկավարները, քաղաքական թէ զինուորական, այժմ իրենց ետին ձգած են կորիզ-ային հաւանական պատերազմի մը անցնող հարցը: Անոնք արդէն իսկ կը պատկերացնեն յետ պատե-րազմեան շրջանը՝ միլիոնաւոր զոհեր, սակայն հօգի Հնդկաստանը յաղթական դուրս եկած վիճակով: Փաքիստանի հոգեբանական իրավիճակը նուազ ամուր չէ: Նախագահ Փերվիզ Մուշարաֆ խելացնոր դարձած է իշխանութեան տիրանալու յե-ղաշրջումին նման յեղաշրջումով մը իշխանութե-նէն հեռացուելու մտաւախութեամբ: Կորիզային կարողականութիւն ունեցող հետարձակ երեք

հրթիռներ փորձարկելու անոր անցեալ շաբթուան որոշումը արկածախնդրական մօտեցումի վախազ-ղու ցուցանիշ մըն էր:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար ձեք Սթրո, այլ երկիրներու իր պաշտօնակիցներուն նման, եկած է այն ցնցիչ եզրակացութեան, թէ Փա-քիստանի նախագահը, հնդկական ղեկավարութեան նման կտրուած է տրամաբանութենէ:

Մտահոգիչ անտեսում մը առիթ տուած է այս տագնապին սրումին անցնող 12 ամիսներուն: Ամիս-ներ, որոնք յաւակապէս 11 Սեպտեմբերէն ետք, են-թակայ եղած են ամերիկեան մտահոգութիւններու: Կլանուած էինք Իրաքի ներկայացուցած սահմանա-փակ վտանգով, մինչ Հնդկաստան եւ Փաքիստան քառասմբակ կ'արշաւէին դէպի աղէտ մը, որ քանի մը օրուան հետեւորութեան վրայ կրնայ ըլլալ:

Քաշմիրի տագնապին միջամտելու Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու ուշացած որոշումը ող-ջունելի է, սակայն բաւարար չէ: Կ'ապրիմք աշխար-հի մը մէջ, որ աւելի բարդ է վտանգալից է՝ քան այն ինչ որ կը սահմանուի Սպիտակ Տան կողմէ:

ՄԱԿը խայտառակ կերպով գրեթէ լուռ է այս հար-ցին մէջ: Ժամանակն է, որ ան սկսի վերահաստա-տել իր ազդեցութիւնը, մինչ Ամերիկա պէտք է գոր-ծի լծէ նոյն վճարակաւորութիւնն ու ներուժը, զորս ներ-կայիս կ'օգտագործէ Աֆղանիստանի եւ Իրաքի հար-ցերուն համար:

«ՏԻ ՕՊՁԸՐՎԸՐ»

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՍԱՐՁՈՒՄՆԵՐՈՒՆ ՍԵՍԻՆ՝

ՎՐԱՍՏԱՆ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻԻ ԼՈՒՐՁ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Երբ ամերիկեան յա-տուկ ուժերը 27 Մայիսին սկսան մարզել վրացի զին-ւորները, երկու եր-կիրներէն պաշտօնական դէմքեր սկսան վերար-ծարծել վրաստանի անօ-րէն Փանքիսի կիրճին մէջ իսլամ ահաբեկչներու ներկայացուցած վտան-գը: Սակայն, ամերիկեան առաքելութեան առաջին օրն իսկ, ամերիկացի կարգ մը դէտեր հարցադ-րուումներ ներկայացու-ցին, թէ այդ ծրագիրը ինչպէս կրնայ առնչուիլ վրաստանի ներքին քա-ղաքականութեան:

Պաշտօնապէս, Միաց-եալ Նահանգներ զին-ւորներ զրկած է Թիֆ-լիս՝ ամրապնդելու հա-մար շրջանային ապահո-վութիւնը՝ ահաբեկչու-թեան դէմ պատերազմին մէջ եւ ապահովելու արեւմտեան շուկաներ



Ամերիկեան ուժեր կը ժամանեն Վրաստան:

հասնող ուսական եւ կեդրոնական ասիական քարիւղին եւ բնական կազի ճամբան: Նախա-գահ ձորճ տապալուող Պու-մար շրջանային ապահո-վութիւնը՝ ահաբեկչու-թեան դէմ պատերազմին մէջ եւ ապահովելու արեւմտեան շուկաներ

եան խարխուխ մէջ, ուր ներկայիս տեղադրուած են 10 «Հուլի» ուղղաթիռ-ներ:

Փենթագոնի մարզումի եւ սպառազինման ծրա-գիրին հիմամբ ամերիկա-ցի զինուորները վրացի-ներուն գինեւարժու-թեան եւ ձեռնարկութիւն գործածութեան մար-զուումներ կ'ընեն: Վրաս-տանի մէջ հաստատուած զօրք կը զրկէր, արտա-քին գործոց նախարա-րութեան կողմէ հրապա-րակուած տեղեկագիր մը, «Համաշխարհային Ահաբեկչութեան Օրինա-գրով», աշխատանքի կը մղէր վրաստանը: «Քա-լիտա» չհետ կասկածելի կապեր ունեցող եւ Փան-քիսի մէջ հաստատուած չեչէն եւ իսլամ ըմբոստ-ները ուղղակի թիրախ դարձնելու փոխարէն, Միացեալ Նահանգներու կողմէրը կողմերուն հիմաբալ՝ ներառեալ՝ Միացեալ Նահանգներ Միացեալ Նահանգներ պիտի չուզէր դիտուիլ իր-բեւ զինուորական այն-հասակ, որ առանձին պա-տերազմ կը մղէ աշխար-հին դէմ: Առաւել, բացա-րաբար իրողութիւնը կը մնայ այն, որ հակառակ կարգ մը հարցերու մէջ (յատկապէս ինչ կը վերա-բերի Միջին Արեւելին) իրենց անհամաձայնու-թեան, եւրոպական կա-մավարութիւնները կը մնան Միացեալ Նահանգ-ներու հօգուածներու դաշ-նակիցները: Նաեւ, մնաց-եալ աշխարհին հետ բաղ-դատաբար, երկու ընկե-րութիւնները յատկանշ-չականօրէն նոյնանման արժէքներ ունին:

րուժեր կ'ըլլային:

Եւրոպացիները պէտք է պատրաստեն յարձա-կողան արեւմտեան շուկա-կրնան պատերազմիլ ամերիկացիներէն ան-պան իր դրաքով սխալ ձե-ւով կը ծախսէ. անիկա-զարկ կու տայ ցամաքա-յին իր ուժերուն (որոնք ստեղծուած էին դիմադ-րելու խորհրդային ցա-մաքային յարձակումնե-րը), փոխանակ զարգաց-նելու արհեստագիտու-թեանը, բանակի ղեկա-վարման դրութիւնը եւ արագ միջամտութեան ուժերը, որոնք այսօր-ւան անհրաժեշտու-թիւններն են: Միացեալ Նահանգներ իւրաքան-չիւր զինուորի համար 30 հազար տոյար կը ծախսէ ուսումնասիրութիւննե-րու եւ զարգացման հա-մար, մինչդեռ Եւրոպա-կը ծախսէ 4 հազար տո-յար: Նոյնիսկ 11 Սեպտեմ-բերէն ետք, եւրոպացի նշանաւոր ոչ մէկ քաղա-քագէտ պահանջած է բարձրացնել իր երկրին պաշտպանութեան պիտ-ւոյնը:

Ուրեմն, ամերիկացի-ները կը կուռնին, իսկ եւ-րոպացիները կը զբաղին խաղաղարար եւ վերա-տեսանք մը աշխատանք-ներով: Սակայն, աշխա-տանքի այս բաժնուժը տանքի չէ: Զինուորա-կան ուժը կը գերիշխէ եւ եւրոպացիները կը մեր-ժեն դաշնակցութեան մէջ երկրորդական կարգի քաղաքացիներ ըլլալ եւ ստիպուած ըլլալ իրենց չծրագրած զինուորական գործողութեան մը ձգած ազդեցութիւնները մաք-րել: Անոնք միշտ կը նշեն, որ իրենք աւելի մեծ թիւով զօրք տեղադրած են Աֆղանիստանի եւ Պաքիստանի մէջ՝ քան Միացեալ Նահանգները եւ միշտ հարց կու տան, թէ ինչու աւելի հեղինա-կութիւն չունին: Այդ հարցումին պատասխանը այն է, թէ խաղաղարար աշխատանքները քաղա-քական կշիռ չեն շնոր-հեք, այլապէս Պանկլա-ստէն ու Նիկերիան գե-

ԵՐՐՈՊԱ. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾԱՄԲՈՎ

Սուր պատերազմ կը մղուի Ատ-լանտեանի վրա-յով, սակայն անիկա ընդ-հանրապէս խօսքի պատե-րազմ է Եւրոպայի ձա-կակողմեան մտահոգա-կաններուն եւ Սիւրացեալ Նահանգներու պահպա-նողական մեկնարաննե-րուն միջեւ: Բրիտանացի Ուլի Հաթլըն վերջերս Ռատտրակեց գիրք մը, որուն մէջ սուր ռոնով ար-տայայտուեցաւ Միացեալ Նահանգներու մասին ըսելով, որ ան վերած-ւած է անբուժելի, տա-րուիչ ընկերութեան մը: Ամերիկացի ձորճ Ուիլ Հակադարձեց՝ մօտաւոր-ապէս ըսելով, որ «գէթ մենք հակահրեայ ինք-նաշխարհային մենիշխա-նութեան ձգտելու յան-ցանքով: Զարկ Բրաու-թամը պատասխանեց ըսելով, որ եւրոպացիները չեն յաջողիր շրջանցել իրենց անկապ ըլլալը: Եւ այսպէս շարունակուե-ցաւ: Սակայն, միւս կող-մէ միլիոնաւոր եւրոպա-ցիներ եւ ամերիկացիներ կը շարունակեն իրարու հետ առեւտուր ընել, իրարու երկիր այցելել եւ հարդրակցիլ դիմացի-նին մշակոյթին հետ:

տակ գոյութիւն ունի մեծ հարց մը, որ եթէ չար-ծարծուի եւ չքննարկուի՝ կրնայ հարցերու մնա-յուն աղբիւր ըլլալ եւ մա-հացու հարուածով պա-ռակտելու դաշնակցու-թիւնը: Եւ այդ հարցը չի լուծուի գործակցու-թեան առաւելութիւննե-րուն մասին ամերիկացի-ներուն կողմէ արտա-յայտուած քանի մը անուշ խօսքերով: Փոխա-րէնը կարիքը կայ Եւրո-պայի կողմէ կարգ մը հա-մարձակ քայլերու: Եթէ Եւրոպա կ'ուզէ համաշ-խարհային ուժ ըլլալ եւ Կարեւոր դեր ունենալ Ատլանտեան դաշնակ-

եւրոպան միայն 140 մի-լիար տոյար կը ծախսէ պաշտպանութեան հա-մար, մինչ Միացեալ Նա-հանգներ՝ 347 միլիար տոյար: Առաւել, Եւրո-պան իր դրաքով սխալ ձե-ւով կը ծախսէ. անիկա-զարկ կու տայ ցամաքա-յին իր ուժերուն (որոնք ստեղծուած էին դիմադ-րելու խորհրդային ցա-մաքային յարձակումնե-րը), փոխանակ զարգաց-նելու արհեստագիտու-թեանը, բանակի ղեկա-վարման դրութիւնը եւ արագ միջամտութեան ուժերը, որոնք այսօր-ւան անհրաժեշտու-թիւններն են: Միացեալ Նահանգներ իւրաքան-չիւր զինուորի համար 30 հազար տոյար կը ծախսէ ուսումնասիրութիւննե-րու եւ զարգացման հա-մար, մինչդեռ Եւրոպա-կը ծախսէ 4 հազար տո-յար: Նոյնիսկ 11 Սեպտեմ-բերէն ետք, եւրոպացի նշանաւոր ոչ մէկ քաղա-քագէտ պահանջած է բարձրացնել իր երկրին պաշտպանութեան պիտ-ւոյնը:

Սակայն, Պոստիան Պելճիքա չէ: Պաքիստան տագնապին ժամանակ Եւրոպան խիստ ռոնով խօսեցաւ, պատժամիջոց-ներ ճշդեց, հակիչներ զրկեց, բայց մինչեւ Ուա-շինկթըն չպնդեց՝ չկարո-



Գոյութեան մէջ, ապա ան պէտք է վերադառնայ պատերազմելու պատ-րաստականութիւն ունե-նալու վիճակին:

Ատլանտեան դաշնակ-ցութիւնը միշտ ալ եղած է ազմկոտ եւ հարցերով լեցուն, որովհետեւ անի-կա դաշնակցութիւնն է ազատ եւ յաճախ ազմկա-րար ժողովուրդներու: Զորճ տապալուող Պուշ-կրնայ Մոսկուայի մէջ աւելի սիրով ընդունե-լու թիւն գտնել՝ քան Պեր-լինի մէջ, սակայն ատիկա չի նշանակեր, որ ուսու-բուծ մեծ մասը կը սիրէ զինք կամ համաժողովի իր վարած քաղաքականու-թեան: Պարզապէս հարցը այն է, որ այս օրերուս աւելի նուազ ջղային յօգ-ւածագրիներ կամ ցու-ցարարներ կան Փութիլի Ռուսիոյ մէջ:

Սակայն, Ատլանտեա-նի այս փոփոխութիւնն

ղացաւ համոզուելու պա-տերազմ մղելու գաղա-փարին: Նոյնիսկ այսօր, եւրոպացիները չեն ուզեր հաւատար, որ զինուորա-կան ուժը կրնայ օգտա-կար ըլլալ խնդիրներու լուծումը: Հակառակ ծնծոր որ անոնցմէ շա-տեր կը հաւատան, որ Սատտամ Հիւսէյնը վտանգաւոր թշնամի մըն է, սակայն անոնց համար լուծումը «պատերազմէ զատ ամէն ինչ է»:

«Վերաբերումի տար-բերութեան հիմքը խոր-քին մէջ կարողականու-թեան տարբերութիւնն է», կը նշէ «Պրո. Բրիկո» հիմնարկի ուսումնասի-րողներէն Ֆիլիպ Կոր-տըն: «Մենք կրնանք եւ իրենք չեն կրնար», կ'աւելցնէ ան: Տնտեսու-թեան գրեթէ նոյն տարո-րութիւնը ունենալով (իւ-րակիցներուն միջեւ տագնապները: Սակայն,

Միացեալ Նահանգներու կողմէրը կողմերուն հիմաբալ՝ ներառեալ՝ Միացեալ Նահանգներ պիտի չուզէր դիտուիլ իր-բեւ զինուորական այն-հասակ, որ առանձին պա-տերազմ կը մղէ աշխար-հին դէմ: Առաւել, բացա-րաբար իրողութիւնը կը մնայ այն, որ հակառակ կարգ մը հարցերու մէջ (յատկապէս ինչ կը վերա-բերի Միջին Արեւելին) իրենց անհամաձայնու-թեան, եւրոպական կա-մավարութիւնները կը մնան Միացեալ Նահանգ-ներու հօգուածներու դաշ-նակիցները: Նաեւ, մնաց-եալ աշխարհին հետ բաղ-դատաբար, երկու ընկե-րութիւնները յատկանշ-չականօրէն նոյնանման արժէքներ ունին:

Այդպիսի փոփոխու-թիւն մը կրնայ Եւրոպան համաշխարհային աւելի հասուն ուժի մը վերածել: Աւելի լայն կարողակա-նութիւնները ուսու-թիւնը ունենալով, եւ-րոպացիները անխուսա-փելիօրէն աւելի լայն ներարները եւ լուծում-ներ պիտի ունենան մի-ջազգային հարցերու շուրջը:

Մինչ վրաստան փոքր փաստեր ներկայացու-ցած է Փանքիսի մէջ ահա-բեկչներու գոյութեան յա-տուկ ուժերու աւելի քան 200 զինուորներ հասած են վրաստան եւ արդէն սկսած են մատակարար-ման եւ հաղորդակցու-թեան ցանցեր ստեղծել երկրին բանակային ընտ-րանի եւ սահմանապահ-ութիւնները կողմէրը կողմերուն հիմաբալ՝ ներառեալ՝ Միացեալ Նահանգները մէջ աւելի զօրաւոր է՝ քան զԻրը, մանաւանդ երբ շատ սուրբեր կը չի-նեն:

Վրաստանի աշխարհա-քաղաքական կացու-թեան միջեւ: Վրաստանի մէջ ամերիկեան ծրագիրը քան զԻրը, մանաւանդ յատկա ժամկէտ եւ սահ-մաններ ունի: Պուշ-կրնայ կարգ մը 64 միլիոն տոյար պիտի յատկացնէ մարզելու համար շուրջ 2 հազար վրացի զինուոր-ներ՝ վրաստանի տարբեր շրջաններուն, ինչպէս նաեւ վազախիսի ամերիկ-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԶՄԻՒՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

ԶՄԻՒՆԻՍՏՆԻՍՆԵՐԻ ԶԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Զմիւռնահայ կեանքը ժ.ժ. դարու կէսերուն հասաւ իր փառքի գագաթնակէտին, երբ անիկա վերածուեցաւ հրատարակութեան եւ մշակութային կեանքի կարեւոր կեդրոնի, ուր բացուեցան տպարաններ, որոնցմէ իրերայաջորդ կերպով լոյս տեսան բազմաթիւ թերթեր ու պարբերականներ:

ՏԵՏԵԱՆ ՏՊԱՐԱՆԸ՝ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԵԳՐՈՆ

Հայ մշակութային կեանքին մէջ անգնահատելի դեր ունեցաւ Տէտէեան տպարանը, որ իր շուրջ չորս տասնամեակ տեւած գործունէութեան ընթացքին վիթխարի աշխատանք տարաւ, որուն շնորհիւ լոյս տեսան հայ գրականութեան անդատանէն ներս նորութիւն նկատուող աւելի քան երկու հարիւր գիրքեր ու հանդէսներ, որոնք մեծ դեր կատարեցին հայ մշակութի պատմութեան մէջ:

Տիրգրան Յարութիւն Տէտէեան 1850ին յղացաւ տպարան բանալու գաղափարը, եւ վաճառական հօր՝ Յովհաննէսի ու եղբայրներուն՝ Արամ Կարապետի ու Սարգիսի աջակցութեամբ 1852ին բացաւ «Տպարան Տէտէեան եղբարց»ը: Տիրգրան Տէտէեան սկիզբը Մեսրոպեան վարժարանին տպագրական սարքերը օգտագործեց, բայց յետոյ Վենետիկէն, Վիեննայէն ու Պոլիսէն բերել տուաւ պէտք եղած գիրքերը, Փարիզ մեկնեցաւ եւ գնեց մամուլ, մեքենաներ, տառեր ձուլելու սարքաւորում, զարգացրեց եւ զարգացրեց: Իր շուրջ համախմբելով զմիւռնահայ տաղանդաւոր թարգմանիչներ Գրիգոր Չիլիկիւրեանը, Մեսրոպեանը, Մատթէոս Մամուրեանը, Գրիգոր Մսերեանը եւ իր եղբայրներ՝ Արամ Կարապետն ու Հայկ Յակոբը, 1853ին ան սկսաւ հրատարակութեան աշխատանքին:

Տէտէեան տպարանէն լոյս տեսան բազմաթիւ վէպեր, դպրոցական դասագիրքեր, կրօնական գիրքեր եւ Ֆրանսերէնէն ու անգլերէնէն թարգմանութիւններ: Անոնցմէ յիշենք «Հազար ու մէկ գիշերներ», «Թշուառներ», «Կոմս Մոնթէ Բրիսթօ», «Ագահը», «Ակամայ բժիշկը», «Սէրը բժիշկ է», «Մարիոն Տըլորմի խոստովանքը», «Լիոնի սուրհանդակը», «Արիւնալի մարքիզուհին», «Թոմէօ եւ Ժիլիէթ» եւ այլն:

Նոյն տպարանէն Տիրգրան Յարութիւն Տէտէեանի խմբագրութեամբ Յուլիս 1853ին լոյս

տեսաւ «Արփի Արարատեան»ը, իբրեւ «օրագիր բանասիրական, ազգային, ուսումնական եւ տնտեսական»: Անոր շնորհիւ հիմը դրուեցաւ եւրոպական դասական գրականութեան հայերէն թարգմանութեան. անոր մէջ մաս առ մաս հրատարակուեցան Մովսէսի, Շէյքսպիրի եւ այլ նշանաւոր հեղինակներու թարգմանութիւնները: Սակայն «Արփի Արարատեան» երկար չգոյատեւեց եւ 1856ին դադարեցաւ հրատարակուելէ:

Տէտէեան տպարանէն լոյս տեսան նաեւ այլ հանդէսներ: «Գարուն Հայաստանի» թերթը՝ 1862ին, Տիրգրան Գարագաշեանի եւ Գրիգոր Պարտիզպանեանի խմբագրութեամբ, որոնք հայ ընթերցողը ծանօթացուցին լոյս տարածուած ստեղծագործութիւններուն: Թերթը սակայն նոյն տարուան վերջաւորութեան դադարեցաւ: «Յաւերժահարս» հանդէսը, Սարգիս Փափագեանի եւ Թ. Աւետիսի խմբագրութեամբ, լոյս տեսաւ 1862ին եւ նոյն տարին ալ դադարեցաւ: Հոն տպուեցաւ Շէյքսպիրի «Վենետիկի վաճառականը»: «Միութիւն» պարբերակը (1860էն 1862՝ ընդհատումներով) «Հաշտենից» ընկերութեան հրատարակութիւնն էր: «Դիմակ» հանդէսը՝ Արամ Կարապետ Տէտէեանի խմբագրութեամբ (որ 1862ին քանի մը ամիս հրատարակուեցաւ), հայ լրագրութեան մէջ փորձեց զարգացնել երգիծագրութիւնը: Հոն տպուեցան Շէյքսպիրի «Համլէթ»էն հետեւները:

«Մաղիկ» հանդէսը Տէտէեան տպարանէն սկսաւ հրատարակուիլ 1861ին, Գրիգոր Չիլիկիւրեանի եւ Ա. Հայկունիի խմբագրութեամբ, բայց 1862ին Չիլիկիւրեան առանձին տանձնեց խմբագրութիւնը: «Մաղիկ» մեծ դեր ունեցաւ հայ հասարակական մտքին ու մշակութիւնի մէջ եւրոպական արժէքներու եւ վիպապաշտական ու զեղագիտական կողմնորոշումներու տարածման մէջ: Չիլիկիւրեան սկիզբը «Մաղիկ»ին մէջ տպեց իր թարգմանած Վիթթոր Հիւկոյի «Թշուառներ»ը, որ բացառիկ ըն-

դունելութիւն գտաւ եւ աննախընթաց խանդավառութիւն ստեղծեց հայ գրասէր հասարակութեան մէջ: «Մաղիկ» դադարեցաւ 1867ին:

Տէտէեան տպարանէն 1867-1868 տարիներուն լոյս տեսաւ նաեւ Սարգիս Միրզայեանի «Իրաւունք քաղաքական» լրագիրը:

Տէտէեան տպարանը քառասուն տարուան բեղուն գործունէութենէ ետք փակուեցաւ 1892ին:

«ԹՈՒԹԱԿ»Ի ԵՒ «ԵՐԿԱՍԵՐ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Զմիւռնիոյ մէջ, 1850ական տարիներուն, գրական շարժումը խանդավառ մթնոլորտ ստեղծած էր. այս միջավայրին մէջ Մեսրոպեան վարժարանին աշակերտները, իրենց տեսուչ Անդրէաս վարժապետ Փափագեանի քաջալերանքով՝ 1854ին անշուք տպարան մը բացին, ուր կէ փայտեայ մամլակի մը միջոցով սկսաւ հրատարակուիլ «Թուրքալ»ը, իբրեւ «օրագիր բարոյական, բանասիրական եւ ուսումնական»: «Թուրքալ» սակայն տարի մը ետք դադարեցաւ:

Մեսրոպեանի աշակերտները նոյն ժամանակ ձեռնարկեցին «Երկասեր»ի հրատարակութեան, որ «Թուրքալ»ին շարունակութիւնը դարձաւ: Աշակերտներէն Մեսրոպ Նուպարեանի խնդրանքին վրայ հայրը՝ Յովհաննէս Նուպարեան տախտակէ մամլակ մը պատրաստեց իրենց տան ատաղձագործին, իսկ Յարութիւն Տէտէեան իր տպարանին կիսամաշ «Միւրհիւտիսեան» կոչուող գիրքեր նուիրեց: Այսպէսով բացուեցաւ «Երկասեր»ի տպարանը՝ սենեակի մը մէջ, ուր աշակերտները իրենց ազատ ժամերուն յօրուածներ գրելով, թարգմանութիւններ կատարելով եւ այդ գրութիւնները տպելով ամիսը անգամ մը լոյս կ'ընծա-



Զմիւռնիոյ Սրբոց Հոփսիմեաց վարժարանի բարերար Հոփսիմէ Կոստանդեան

յէին «Երկասեր»ը, որ փայտեայ անշուք մամլակին պատճառով երբեմն աղտոտ եւ գրեթէ անընթաց կ'ըլլար: «Երկասեր»ի բաժանորդագիր տարեկան տասնչորս դահեակ էր եւ քանի մը տասնեակ բաժանորդ ունէր:

Ռուբէն Անդրէաս վարժապետ Փափագեան, որ տարիներ շարունակ երախտարժան եւ անգրանահատելի դեր կատարած էր զմիւռնահայ կրթական եւ մշակութային կեանքին ու Մեսրոպեան վարժարանի վերելքին մէջ, հոգաբարձութեան հետ տարակարծութեան պատճառով 6 Ապրիլ 1856ին հրաժարեցաւ տեսուչի իր պաշտօնէն. իր սիրելի վարժարանէն ու աշակերտներէն բաժնուած ու հոգեպէս ազդուած՝ ան մահացաւ 6 Մարտ 1857ին, 54 տարեկանին:

ԱՂՔԱՏԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Զմիւռնիոյ հայութեան մէջ մարդասիրական եւ բարեսիրական երախտարժան գործունէութիւն ունեցած է Աղքատասիրաց ընկերութիւնը: Արդարեւ, 1861ին հարուստ եւ ազդեցիկ զմիւռնահայ Պերկամալեան, Աւելիկեան, Եսայեան, Վէճեան, Տիւրքեան, Սենտիքեան եւ Սարգիսեան ընտանիքներուն եւ Սարգիս Միրզա Վանանդեցիի նախաձեռնութեամբ կազմուեցաւ Աղքատասիրաց ընկերութիւնը, նպատակ ունենալով կարօտեաններու, թշուառներու եւ աղքատներու ձեռք երկարել՝ հիւանդութեան ժամանակ ձրի բժիշկ եւ դեղ մատակարարելու, անկարներ խնամելու եւ տարբեր տեսակի օժանդակութիւններ կատարելու նպատակով:

Ընկերութիւնը կազմող ընտանիքները 1 Մայիս 1862ին հրապարակեցին հաղորդագրութիւն մը, հաստատելու համար իրենց առաջըրանքները: Ծուտով ընկերութեան միացան երեւելի եւ քիչ թէ շատ բարեկեցիկ եւ ծառայելու ու օգնելու նպատակով կազմուեցան ունեցող ընտանիքներ, անհատներ ու բժիշկներ, որոնք բաժանորդագրութեամբ եւ նուէրներով ընկերութիւնը պատկանելի դրամագլուխ տէր կառուցի վերածեցին:

Ընկերութեան հասոյթը կը գոյանար հիմնադիր եւ պատուոյ անդամներու դրամով, բաժանորդագրութեամբ եւ նուէրներով, ինչպէս նաեւ ընկերութեան կողմէ տրուած պարահանդէսներէ եւ այլ հանդէսներէ հաւաքուած դրամով:

Աղքատասիրաց ընկերութիւնը մարդասիրական ու բարեսիրական անգնահատելի գործ տարաւ զմիւռնահայութեան մէջ, եւ յատկապէս գաւառներէն հասնող պանդուխտներու, խանրու անկիւնը հիւսնող թշուառներու ու նկուղներու մէջ տառապող ընտանիքներու համար նախախնամական մեծ դեր ունեցաւ: Ընկերութիւնը ունէր իր գործակալը, որ անձնապէս կը շրջէր, կ'այցելէր հիւանդներուն, կ'երեւէր բժիշկին եւ կը հետաքրքրէր իւրաքանչիւր անհատով: Ընկերութիւնը օժանդակութիւն կը տրամադրէր նաեւ այլ ազգի կարօտեաններու ու թշուառներու:

Աւելի քան քսանամեայ բազմաբեղուն ու երախտարժան գործունէութենէ ետք, ընկերութիւնը, իր գոյութեան քսանչորս փորձող վերնախաւի մը դէմ յամառ պայքարէ մը ետք 1894ին շիջեցաւ եւ լուծուեցաւ:

ՏԵՏԵԱՆՆԵՐՈՒ ԳԵՐԳԱՏԱՆԸ

Զմիւռնիոյ երեւելի եւ հայ գրականութեան ու դպրութեան անդամներն են ընկերութեան անդամներն են Տէտէեանները, որոնք, իբրեւ առեւտրականներ, տպարանատէր - հրատարակիչներ, հասարակական ու մշակութային գործիչներ, խմբագիրներ ու թարգմանիչներ, ծաղկուն պահած են զմիւռնահայ կեանքը:

Գերդաստանցի նահապետը՝ Կարապետ Տէտէեան ապրած է ժ.ժ. դարուն եւ ժ.ժ. դարուն սկիզբը: Զուակը՝ Յովհաննէս, ծնած՝ 1795ին, առեւտրական ասպարէզ նետուեցաւ: Անատուրեան միթոյ, պտուղներ, իւղեր եւ գիւղատնտեսական այլատեսակի ապրանքներ նախընտրելով ղեպի Եւրոպա արտահանելով մեծ արբեր քաղաքներու մէջ շուկաներ գտնելով ան մեծահարուստ դարձաւ: 1867ին, Փարիզի մէջ կազմակերպուած գիւղատնտեսական արտադրանքներու համաշխարհային ցուցահանդէսին, Յովհաննէս Տէտէեան ներկայացուց յիսուցչորս տեսակ միթոյ, պտուղներ եւ վարդախիւղ, որուն համար ալ արժանացաւ Մեծ Ոսկեայ մետալին եւ այլ պարգևներու: Մահացաւ 1878ին:

Յովհաննէս Տէտէեան հինգ մանչ գաւառներ: Արամ Կարապետ, Ստեփան, Տիրգրան Յարութիւն, Հայկ Յակոբ եւ Սարգիս, բոլորն ալ բարձր կրթութիւն ստացած, մտաւոր արժանիքներով եւ ընդհանուր գարգացումով ու լայն պաշարով օժտուած, հանրածանօթ՝ հայ եւ օտար շրջանակներու:

Արամ Կարապետ ծնած էր 1822ին, Զմիւռնիա: Տակարն մանուկ ան ջրկուեցաւ Մեսրոպեան վարժարանը, իբրեւ ուսուցիչ ու դաստիարակ ունենալով Ռուբէն Անդրէաս վարժապետ Փափագեանը: Ուսուցիչին մարդկայնական եւ հայրենասիրական շունչին եւ դպրոցին մտաւորական շրջանակին մէջ ան ստացաւ իր կրթութիւնը, հայերէնի եւ թրքերէնի կողքին հմտացաւ ֆրանսերէնի ու անգլերէնի մէջ, որոնք այդ ժամանակ տակաւին նոր որդեգրուած էին վարժարանէն ներս:

Դպրոցը ւարժանքի եւ տաղանքի ան քաջկցեցաւ հոր առեւտրական գործունէութեան: Երբ իրմէ տասը տարեկան կրտսեր եղբայրը՝ Տիրգրան Յարութիւն 1850ին յղացաւ սեփական տպարան բանալու գաղափարը, Արամ Կարապետ գորավիզ կանգնեցաւ անոր, նիւթական լայն օժանդակութիւն տրամադրեց եւ աշխատեցաւ պետական արտոնագիր ձեռք օգնելու համար: Տպարանի հիմնադրութեան մասին իր եղբոր՝ Տիրգրան Յարութիւնի անմիջական գործակիցը դարձաւ, ինքզինք նուիրելով գրական, ստեղծագործական, թարգմանական ու հրատարակչական աշխատանքներուն: Արամ Կարապետ 1853ին ձեռնարկեց ազգագրական արժէք ներկայացնող «Բարեկենդանի անցածամբեր» գործին պատրաստու-

թեան, ուր ան խորապէս ուսումնասիրեց հայկական ասացուածքներու, հանելուկներու, բառախղերու եւ առածներու ծագումն ու բնույթը: Նոյն տարին սկսաւ Շէյքսպիրի «Միսլիներու կատարելագործիւն» աշխատանքին թարգմանութեան, գործը հրատարակեց նոյն տարին, յառաջաբանով ու համապատասխան ծանօթութիւններով: «Միսլիներու կատարելագործիւն» գործին թարգմանութիւնը սակայն անարտ մնաց:

Արամ Կարապետ ծրագրեց երգիծական բնույթով հանդէսի մը հրատարակութեան, գոր 1862ին իրականութեան վերածուց. Տէտէեան տպարանէն լոյս տեսնող «Դիմակ»էն հրատարակուեցաւ ետք թիւ եւ այնուհետեւ դադարեցաւ:

Նոյն տարին՝ 1862ին ան թարգմանեց Շէյքսպիրի «Վենետիկի վաճառականը»՝ բարձր, միաժամանակ ներկայացնելով հեղինակը եւ համապատասխան բացատրութիւններ տալով անոր գրական վաստակին մասին: 1863ին հրատարակեց «Ումպը գրաւորութեան»ը, ուր ան ներկայացուցած է բազմաթիւ հանելուկներ, բառախղեր, խորհուրդներ եւ թելադրութիւններ: 1866ին հրատարակեց Շէյքսպիրէն թարգմանած «Դիմակ» եւ «Դիւլիէթ»ը, իսկ 1879ին՝ Մովսէսի «Թարսիֆ»ը:

Գրական, ստեղծագործական ու թարգմանական բեղուն գործունէութենէ ետք, Արամ Կարապետ մահացաւ 25 Փետրուար 1901ին, 79 տարեկանին, Զմիւռնիոյ մէջ:

Եղբայրը՝ Ստեփան ծնած էր 1823ին, Զմիւռնիա: Մեսրոպեան վարժարանէն շրջանաւարտ, իր կարգին ան օժանդակեց իրենց կրտսեր եղբոր՝ Տիրգրան Յարութիւնի տպարան բանալու աշխատանքին եւ այնուհետեւ իր նպատակը բերաւ անոր գործունէութեան ու վերելքին, միաժամանակ քաջալերելով ու նախաձեռնելով զմիւռնահայ գրողներու ստեղծագործութիւններու հրատարակութեան:

Հմուտ՝ ֆրանսերէնի եւ ֆրանսական գրականութեան սիրահար, ան գրադեցաւ նաեւ թարգմանական աշխատանքներով եւ հայերէնի թարգմանեց Ռուսոյէն կարգ մը գործեր: Ստեփան Տէտէեան միաժամանակ պետական ծառայութեան մէջ մտաւ եւ Փարիզի ու Լոնտոնի թրքական դեսպատուներուն մէջ թարգմանի պաշտօն ստանձնեց:

Ան մեծ դերակատարութիւն ստանձնեց նաեւ ազգային եկեղեցական կեանքին մէջ. եղաւ Զմիւռնիոյ առաջնորդարանի գաւառագրական եւ քաղաքական ժողովներու եւ տնտեսական ու ուսումնական խորհուրդներու անդամ: Ան լայն օժանդակութիւն տրամադրեց Աղքատասիրաց ընկերութեան եւ մեծապէս նպաստեց անոր վերելքին: Մահացաւ 2

Հոկտեմբեր 1906ին, 83 տարեկանին, Զմիւռնիոյ մէջ:

Կրտսեր եղբայրը՝ Տիրգրան Յարութիւն ծնած էր 10 Մարտ 1832ին, Զմիւռնիա: Մեսրոպեան վարժարանին մէջ ան դաստիարակուեցաւ Անդրէաս վարժապետ Փափագեանի շունչին տակ, ապա մեկնեցաւ Աւստրիա եւ Թրիեսի վիեննական Միսլիներու դպրոցին մէջ շարունակեց իր բարձրագույն ուսումը, հմտանալով հայերէնի եւ օտար քանի մը լեզուներու: Ան մեծ հետաքրքրութիւն ունէր մանաւանդ քարտեսագիտութեան նկատմամբ:

Վերադառնալով Զմիւռնիա, տասնութամեայ Տիրգրան Յարութիւն 1850ին յղացաւ տպարան բանալու գաղափարը. հայրը եւ մեծ եղբայրները համամիտ գտնուեցան եւ խոստացան ներկայ կանգնել իրեն: Յաջող տարին արտօնագիր ձեռք օգնելով, 1852ին ան բացաւ «Տպարան Տէտէեան եղբարց»ը, որուն կատարելագործման համար շանք ու միջոց չխնայեց. անձնապէս շրջեցաւ եւրոպական քաղաքներ եւ ձեռք օգնեց արդիական սարքաւորումով մեքենաներ ու տառեր: Իր շուրջ համախմբելով տաղանդաւոր գրողներ ու թարգմանիչներ, եւ նիւթական առտ վարժարանութեան աշխատանքին: Եղբայրներուն աջակցութեամբ 1853ին ձեռնարկեց «Արփի Արարատեան» պարբերականի հրատարակութեան (որ գոյատեւեց մինչեւ 1856):

Հեղինակ շարք մը բանաստեղծութիւններու, ան գրադեցաւ նաեւ թարգմանական աշխատանքներով: Անոր թարգմանութեամբ լոյս տեսան Մովսէսի կատարելագործիւններէն «Ազգահ» եւ «Ակամայ բժիշկը», ինչպէս նաեւ «Հազար ու մէկ գիշերներ», «Կոմս Մոնթէ Բրիսթօ», «Անճելիա Գաճիլի», «Ժընեւիւ» եւ «Լուզրեցիա Պորճիա»:

Տիրգրան Յարութիւն գրադեցաւ նաեւ դասագիրքերու պատրաստութեամբ. 1854ին կազմեց «Այրբեանարան»ը, 1864ին՝ «Ընթերցարան»ը, 1870ին՝ «Քերականութիւն հայերէն լեզուի» աշխատութիւնը: Մահացաւ 27 Դեկտեմբեր 1868ին, Զմիւռնիա:

Տէտէեան միւս եղբայրները՝ Հայկ Յակոբ եւ Սարգիս նոյնպէս գրադեցան խմբագրական եւ հրատարակչական աշխատանքներով: Հայկ Յակոբ աշխատակցեցաւ «Բուրաստան Ս. Սահակեան» եւ «Ծաղիկ» հանդէսներուն, թարգմանեց «Երեսուն երեք ծաղկաբանութիւնը նասրէտի խոճալի», «Հասկաքաղ աղջիկը» բառարանը, Վիթթոր Հիւկոյի «Անճելիո» բառարանը, Սիուի «Փարիզի գաղտնիքները», ինչպէս նաեւ «Հազար ու մէկ գիշերներ»ուն առաջին մասերը: Ան յօրինեց եւ օտարներ օսմանցան գիւտարական քայլերը: «Մարշ օսմանիչ»:

ՎՐԱՍՏԱՆ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԿԻ...

Շարունակուած՝ 6րդ էջէն

մղուող պայքարը կը շարունակուի: Փանքիսի մէջ կ'ապաստանած ևս զակներուն մէջ կան խուճը մը արարներ, որոնք կ'ապեր ունէին նախնային հետ (Չեչեներ) պատերազմին մէջ Ռուսիոյ թիւ մէջ թշնամիներէն մէկը): 20 Մայիսին, Վրաստանի ապահովութեան նախարար Վալերի Նապուրեանիս յայտարարեց, որ հարիւր արքայ զինեալներ եւ եօթը հարիւր ուրիշներ սանձարձակ վիճակի մէջ են Փանքիսի մէջ: Եթէ Ռուսիան այդ տուեալները օգտագործէ իր անձնական հակաչեչեչական քարոզչական արշաւը մղելու համար Վրաստանի մէջ, եւ եթէ Միացեալ Նահանգներ պատրաստուի Վալերիսի խորհուրդ ապագային իրաքի դէմ յարձակումներ գործելու կեդրոնի վերածելու, Վրաստանի մէջ եւ շուրջ խոռվութիւնները կրնան սաստկանալ:

Այս բոլոր անկայունութիւնը կրնայ գործի մղել ամերիկացի զինուորական խորհրդակցիները: Մարզումի եւ սպանական «Իքար-Թասս» լրատուական գործակալութիւնը յայտնեց, թէ 60 զինուորներ, որոնք իրենց խորհուրդը քած եւ ապաստանած են անտառներու մէջ, իբրեւ ռոզդե իրենց գործակիցներէն մէկուն ցուցաբերած վերաբերումին, վերադարձած են չորս օր ետք: Միեւնոյն ատեն քննադատութիւն եւ օտանդակութիւն ստանալով Միացեալ Նահանգներէն, Վրաստան կը գտնուի մարտահրաշխաներով լեցուն կացութեան մը առջեւ: Անպէտք է պայքարի Ռուսիոյ մը դէմ, հակադրուած հակառակութիւն չկան իրենալ զսպելու ամբաստանութիւններուն եւ բարելաւէ մարդկային իրաւանց պաշտպանութեան իր մարզը: Միացեալ Նահանգներ յստակացուցած է, որ իրօք մտադիր չէ մղելու Վրաստանի կուրնները, նախընտրելով «կանաչ պերեցեր» օգտագործել բարձրացնելու համար Վրաստանի բանակին հակառակութեան ռազմավարութիւնները: Օտար «մուտահէտին»ներուն եւ չեչեչ ըմբոստներուն Փանքիսիէն հեռացումը կը ծառայէ թէ՛ ռուսներուն եւ թէ՛ ամերիկացիներուն շահերուն: Սակայն, վերջերս հրապարակուած տեղեկագիրները հարցականի կ'ենթարկեն Շեւարտանի վստահելիութիւնը, հետեւաբար յստակ չէ, թէ վերացական ուժերը ինչպէս դուրս պիտի հանեն այդ պարտականութիւնը:

նանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Նաչբերան, ՀՕՄի ատենապետուհի Մարո Մինասեան, Հ. Յ. Դ. Լիրանանի կեդրոնական կոմիտէի եւ «Կարմիր Լեռ» կոմիտէի ներկայացուցիչներ, ուղեկից միութեանց, յանունանութեանց ներկայացուցիչներ ու հոգեւոր պետեր, Այնճարի քաղաքապետ Սեպուհ Սպախեան, Պուրճ Համուտի քաղաքապետութեան ներկայացուցիչներ, Հիքապիի երեսփոխան Եուսէֆ Մաալուֆ, եւ ազգային ու պետական բազմաթիւ այլ ներկայացուցիչներ:

Նորախճանքի հովանաւոր Լիրանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Նաչբերան իր պատգամը փոխանցեց ներկայիցներուն եւ ըսաւ, որ Մուսա Լերան հայութեան այնճարեան վերապրումի պատմութեան մէջ ՀՕՄի «Աղթամար» մասնաճիւղը իր անհրաժեշտ վաստակը ունի:

Համազգայինի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի «Կոմիտաս» երգչախումբը Լիրանանի, Հայաստանի Հանրապետութեան եւ ՀՕՄի քայլերգներով հանդիսութեան բացումը կատարելէ ետք, «Աղթամար» մասնաճիւղի վարչութեան խօսքը փոխանցելու համար հայերէնով եւ արաբերէնով յաղորդաբար խօսք առին Լիլա Թիւմպէրեան եւ Անժէլ Մանճեան:

Օրուան հանդիսավարն էր ընկ. Պետրոս Շէմմէսեան: Յաւուր պատշաճի խօսք արտասանեցին ՀՕՄի կեդրոնական վարչութեան ատենապետուհի Մարո Մինասեան եւ «Բագին» գրական պարբերաթերթի խմբագիր Պողոս Մնասեան: Հանդիսութեան պաշտօնական բաժինէն ետք, ճաշացան «Արեւ»ի սրահը թնդաց հայկական ժողովրդային երգ ու պարով, որ տեւեց մինչեւ առաւօտ: Ներկայիցները ստացան «Աղթամար» մասնաճիւղի 60ամեակին առիթով պատրաստուած գրքոյկն ու յուշանուէրը:

ՀՕՄի Երջանային վարչութիւնը, որ կը նախագահէր հանդիսութեան, գնահատելով «Աղթամար» մասնաճիւղի վարչութիւնը, 60ամեակի հանդիսութեան կազմակերպ եւ յաջող աշխատանքին համար, խրատ-ճանքը եզրափակեց հետեւեալ գնահատանքով. «Հաստատ համոզուած ենք, որ «Աղթամար» մասնաճիւղը պիտի շարունակէ իր երթը հաստատ եւ ամուր քայլերով՝ դէպի նորանոր նուաճումներ, լուսաւորելով նորահաս սերունդներուն ճանապարհը, հասնելու համար մէկ եւ ամբողջական հայաստանի սրբազան երազին»:

«ԱՉԳԱԿ» ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ԹԻԻԵՐԸ
«ԱՉԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 2+1274:

Ets. Avo Soulahian Exclusive Agent Ets.Avo Soulahian Tel: 01 - 691526
igloo 54 QUART Ultra
Made in the USA


ԼՈՒՏՈՒՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ
Լոնտոնի սակարանի մէջ, դրամաբիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երեկ կէսօրին.

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★
* ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
* ԶՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
* ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
* ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
* ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
* ԿԵՆԻՏ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
* ԿՆԵՆԵՆ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
* ԿՆԵՆԵՆ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
* ԱՅԾԵՂԶԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
* ՍՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
* ԶՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

ՕՐԱՏԵՏՐ
Panasonic
ԸՆՈՒՏԵՍԻԼ
Թ. Է. Լ.
10:00. Սապահո
13:00. Մարու
14:00. Եւրոնիւզ
14:30. Լուրեր
15:00. Մեր կառու
17:30. Ֆիլմաշար
18:30. Կենդ. գծակար
19:30. Արաք. լուրեր
20:00. Ֆապթեր
21:30. Մէլիսա
22:30. Մայրոջմ էքս
23:00. Սի. չէյնս
15:00. Մարիսա
16:00. Պիքսապրոտ
17:30. Սիւն/35 mm
18:00. Կո ըմբնք
18:15. Տեղական յայտագիր
19:00. Լուրեր
20:00. Քրոնիկ
20:30. Մուլտաբար մուֆիտ
22:00. Մասաիլեա
23:00. Մոնտաիլի յատուկ յայտագիր
15:00. Լուրեր
16:00. Պիքսապրոտ
17:30. Սիւն/35 mm
18:00. Կո ըմբնք
18:15. Տեղական յայտագիր
19:00. Լուրեր
20:00. Քրոնիկ
20:30. Մուլտաբար մուֆիտ
22:00. Մասաիլեա
23:00. Մոնտաիլի յատուկ յայտագիր
15:00. Լուրեր
16:00. Պիքսապրոտ
17:30. Սիւն/35 mm
18:00. Կո ըմբնք
18:15. Տեղական յայտագիր
19:00. Լուրեր
20:00. Քրոնիկ
20:30. Մուլտաբար մուֆիտ
22:00. Մասաիլեա
23:00. Մոնտաիլի յատուկ յայտագիր

ԽԱՉԲԱՌԻ ԹԻԻ 5161
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ
1 2 3 4 5 6 7 8 9 10
1
2
3
4
5
6
7
8
9
10
ԸՈՐԻՉՈՒՄԱԿԱՆ
ՈՒՂԱՆԱՅԵԱՏ
1. Դեռահասակ, ծաղկատի - Այրուբենէն:
2. Հանրակին - Որոգայթ:
3. Իսահակեան գիւղի նախկին անուանումը:
4. Արական անուն - Աձականակերտ մասնիկ:
5. Պատր գետի թանձր մրուր - Հացի կերուած մաս:
6. Մերձաւոր Արեւելքի հնագոյն երկիրներէն:
7. Կամազուրկ - Սեւագոա:
8. Տիրացու - Չոհեյ:
9. Թիֆուստան:
10. Տարածքի միւտար - Վարձարան:
1. Խուլ, թանձր թուր - Սողոմի բախտակից բաղաբերէն:
2. Արական անուն - Ուտեստ:
3. Չինակից, դաշնակից:
4. Ուրուած բարակ մոմ - Օրականով աշխատող բանուոր:
5. Մաղաճի թագաւորներէն - Չայնակից տառեր:
6. Տնաքանդ:
7. Չոհ, գող - Յետոյ:
8. Այրուբենէն - Եկբան, բորկոնիմ:
9. Սուր - Չորաբարէլի որդին:
10. Ելեկտրականութեան միւտար - Չանայ:
1 2 3 4 5 6 7 8 9 10
1 Մ Շ Տ Ի Կ Զ Ա Մ Բ
2 Ա Շ Մ Բ Ա Գ Ն Ա Բ
3 Ն Ա Ո Ղ Ա Բ Ա Ն
4 Ա Ն Կ Լ Ի Կ Ս Ա Ս
5 Զ Ի Ն Ի Ն Ո Ի Ե
6 Կ Ա Ռ Ն Ն Ա Լ Ա Զ
7 Ե Կ Շ Ի Թ Ն Ն
8 Բ Ա Մ Բ Ա Դ Ի Դ
9 Տ Բ Ա Մ Ա Դ Ի Բ Ի
10 Ա Ն Ի Ի Շ Ե Ն Բ
ԹԻԻ 5160
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՄՈՆՏԻՍԼ 2002

ԿԱԶՄԱԿԵՐՈՒԻՉ ԵՐԿԻՐՆԵՐԸ՝ ՃԱՓՈՆ ԵՒ ՐԱՐԱԻԱՅԻՆ ՔՈՐԷԱ ԼԱԻ ՁԵՒՈՎ ՍԿԱԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ



Ճափոնի եւ Հարաւա-
լին Քորէայի մէջ տեղի ու-
նեցող 2002ի Մոնտիսլին,
որ երէկ թեւակոխեց իր
հինգերորդ օրը, տեղի ու-
նեցան երեք ճակատում-
ներ:

Վստահարար երէկ-
ւան արդիւնքները կա-
րեւոր էին կազմակերպիչ
երկու երկիրներուն՝ Ճա-
փոնի եւ Հարաւային Քո-
րէայի համար, որովհե-
տեւ անոնք կը կատա-
րէին մրցաշարքի իրենց
առաջին մրցումը՝ իրենց
հոծ համակիրներուն ներ-
կայութեամբ:

Նշենք, թէ նախքան եր-
կուքին կատարելիք
մրցումը, տեղի ունեցաւ
կատարելիք անցողիկ
կատարելիք անցողիկ
կատարելիք անցողիկ

Հարաւային Քորէայի
մակիրներ իրենց երկրէն
մեկնած էին Քիւնհիլե
(Հարաւային Քորէա),
ներկայ գտնուելու հա-
մար պատմական այս
մրցումին, ուր իրենց երկ-
րին ֆուտբոլի ազգային
խումբը կը կատարէր
Մոնտիսլի իր առաջին
մրցումը: Սակայն, չին
համակիրներուն ներկա-
յութիւնը սպասուած ար-
դիւնքը չտուաւ: 40 հա-
զար չին համակիրներ
ներկայ պիտի ըլլային այս
մրցումին: 43 հազար հա-
մակիր հիւրընկալող դաշ-
տին մէջ, սակայն ներկայ
էին միայն 27 հազար հա-
մակիրներ:

Քորէա Ռիթա, որ
առաջին անգամ Մոն-
տիսլի իր մասնակցու-
թիւնը բերած էր 1990ին,
յաջողեցաւ 2-0 արդիւն-
քով պարտութեան մատ-
նել Չինաստանը, չնոր-
հի՛ս Ռոնալտո Կոմման-
չի (61րդ) եւ Մարիո Իտա-
թի (65րդ) նշանակած կո-
ւրտներ:

Նախքան այս մրցումը,
Չինաստան կ'ակնկալէր,
որ մարզիչ Պորա Միլո-
թիւնովիչ իր խումբը պի-
տի հասցնէ Բ. հանգըր-
ւան, այնպէս ինչպէս
հասցուցած էր Քոսթա
Ռիթան՝ 1990ի Մոնտիս-
լին: Սակայն այս պար-
տութեանէն ետք յոյսերը
կը մնան շատ նշին:

Սերպ Միլոթիւնովիչ
ըսած էր, որ եթէ իր կազ-
մը Բ. հանգըրուան կ'ուզէ
հասնիլ, պէտք է պար-
տութեան մատնէ Քոսթա
Ռիթան, հաւասարու-
թիւն մը արձանագրէ
Թուրքիոյ հետ, հոգ չէ թէ
եթէ պարտուի Պրագայէն:

Մրցումին իրաւարարն
էր Քիթոս Վասարաս
(Յունաստան), իր հետ
ունենալով կողմի իրա-
ւարարներ Մաթիսը (Փոր-
թուգալ) եւ Եափ Փուլը
(Հոլանտա):

Երէկուան երկրորդ
մրցումը, որ տեղի ունե-
ցաւ Ճափոնի եւ Պելճիթա-
յի միջեւ, վերջ գտաւ 2-2
արդիւնքով: Մրցումին
արդիւնքէն բացի հե-
տաքրքրական եղաւ այն,
որ հիւրընկալ երկրին հա-
մակիրները գրեթէ լեցու-
ցած էին «Սայթամա»
դաշտին թրիպիւնները:
Սակայն տակաւին մնա-
ցած էին պարագայ տեղեր,
նկատի ունենալով, որ
շուրջ 64 հազար համա-
կիր հիւրընկալող դաշ-
տին մէջ ներկայ
գտնուած էին 55 հազար



Մարք Վիլմոթը կը տօնէ իր նշանակած կոլը:

համակիր: Մրցումին գրեթէ առա-
ջին մէկ ժամը որեւէ կոլ
չ'ընշանակուեցաւ, սա-
կայն 57 վայրկեան ետք,
16 վայրկեանի ընթացքին
նշանակուեցաւ չորս կոլ:
Մարք Վիլմոթը (57) եւ Փի-
թըր Վան Տէր Հէյտըն
(75րդ) նշանակեցին Պել-
ճիթայի կողմը, իսկ Թա-
քալուքի Սուզուքի (59րդ)
եւ Ժոնի ինճի (68րդ)՝ Ճափոնի կողմը:

Պելճիթայի առաջին կո-
լը նշանակած խմբագետ
Վիլմոթը (33 տարեկան),
որ չորրորդ Մոնտիսլի ըլ-
լալով ներկայ էր, այսպի-
սով նշանակեց իր 27րդ
կոլը, ազգային խումբին
հետ իր կատարած 68րդ
միջազգային մրցումին:

խումբին մարզիչ Ռո-
պէր Ուասէթ մրցումէն
ետք յայտնեց, թէ բաւա-
րարուած կը զգայ այս
հաւասարութեամբ,
որովհետեւ ընդունեց այն
իրականութիւնը, որ
մրցակից կազմը անակըն-
կալի բերաւ գինք, իր մար-
զիչներուն ջուրհարեմ
բաւական չախաղար-
կութեան պատճառով:
Ան գովասանքով ար-
հարարն էր Ուիլիմ

Նշանակեցին՝ Հուանկ
Րուբիո, որ առաջին ան-
գամ ըլլալով է, որ այս-
պիսի սքանչելի համակիր-
ներու կը հանդիպի, որոնք
իրենց մեծ անդրադարձը
ունեցան խումբին արձա-
նագրած արդիւնքին մէջ:
Ճափոնի մարզիչ
Ֆրանսացի Ֆիլիպ
Թուրսիէ եւս յայտնեց,
թէ բաւարարուած կը
զգայ իր կազմին լաւ խա-
ղարկութեամբ:
Մրցումին կեդրոնի
իրաւարարն էր Ուիլիմ

Մաթիւս (Քոսթա Ռիթա),
իսկ կողմի իրաւարար-
ներն էին՝ Հայտար Քո-
լէթ (Լիպերիա) եւ Եուրի
Տիւփանով (Պիլիպին-
սիա):

Երէկուան երրորդ
մրցումը, որ տեղի ունե-
ցաւ Հարաւային Քորէա-
յի եւ Լեհաստանի միջեւ,
վերջ գտաւ հիւրընկալ
կազմին յաղթանակով՝
2-0 արդիւնքով: Մրցու-
մին արդիւնքէն բացի,
կարեւոր եղաւ դաշտին
թրիպիւններուն լեցու-
լը, ուր ներկայ էին շուրջ 49
հազար համակիր: Յաղ-
թական կազմին երկու
անպատասխան կոլերը

սկսեալ (Պէյրու-
թի ժա-
մ ո վ),
ապա տե-
ղի կ'ունե-
նան եր-
կու այլ
ճակա-
տումներ:
Առա-
ջ ի ն
մրցումը
տեղի
կ'ունենայ
Քոսթա
Ռիթայի
մէջ (Ճա-
փոնի)
Ռուսիոյ
եւ Թու-
նիզի մի-
ջեւ (Լ-
խմբակ):

Հակառակ անոր որ
Ռուսիա իր մասնակցու-
թիւնը բերած է ութ
Մոնտիսլիներու, սակայն
երբեք չէ թուումը, որ
երրորդ անգամ ըլլալով
կը մասնակցի Մոնտիս-
լին, 1978էն եւ 1998էն
ետք:

Մրցումին կեդրոնի
իրաւարար պիտի ըլլայ
Փիթըր Փրենտերկասթ
(ժամայթա), իսկ կողմի
իրաւարարները՝ Մայքըլ
Ռակոնսաթ (Թրինիտադ)
եւ Փոլ Սմիթ (Նոր Զելան-
տա):

Օրուան երկրորդ
մրցումը տեղի պիտի ու-
նենայ Սուդանի մէջ (Հա-
րաւային Քորէա), ուր
Միացեալ Նահանգներ
եւ Փորթուգալ (Դ. խմբակ)
կը ճակատին իրարու
դէմ՝ ժամը 12:00ին):
Այս մրցումէն ետք,
այսպիսով 32 խումբեր
ալ կատարած կ'ըլլան մէ-
կական մրցում, թէն այ-
սօրուան յայտագիրին
վրայ է այլ մրցում մըն

Սովորականին նման
մրցումները կը սկսին
առաւօտեան ժամը 9:30էն



Եու Սանկ - Շիոլ

Նախապէս երկու
խումբերը իրարու դէմ
յանդիման եկած են չորս
անգամ ըրորոն ալ բարե-
կամական մրցումին ըն-
թացքին, որոնց ընթաց-
քին Փորթուգալ արձա-
նագրած է երկու յաղթա-
նակ, մէկ հաւասարու-
թիւն եւ կրած՝ մէկ պար-
տութիւն:

Միացեալ Նահանգներ
եւ Փորթուգալ անգամ ըլլա-
լով է, որ կը մասնակցին
Մոնտիսլին, մինչ Փոր-
թուգալ՝ երկու անգամ,
1966էն եւ 1986էն ետք:
Օրուան իրաւարարն է
Պայրըն Մորենս (էքուա-
դոր), իսկ կողմի իրաւա-
րարները՝ Պոմըր Ֆիբրո
(էքուատոր) եւ Աունի
Հասուունէ (Յորդանան):
Գերմանիա եւ Ալիը (Ե-
խմբակ), որոնք այսօր-
ւան վերջին մրցումին
պիտի ճակատին իրարու
դէմ, պիտի ըլլան առա-
ջին երկու խումբերը,
որոնք 2002ի Մոնտիսլին
իրենց երկրորդ մրցումը
պիտի կատարեն: Մրցու-
մը տեղի պիտի ունենայ
Իպարաքի մէջ (Ճափոն),
ժամը 14:30ին:

Գերմանիա, որ նախա-
պէս 15 Մոնտիսլիներու իր
մասնակցութիւնը բերած
է, շատ մեծ յաղթանակով
սկսաւ Մոնտիսլին, 8 - 0
արդիւնքով ջախջախեց
ետք Սէնտակաան Արա-
բիան: Ալիը, որ իր երրորդ
Մոնտիսլին կը մասնակ-
ցի (1990էն եւ 1994էն ետք),
իր կատարած առաջին
մրցումին 1 - 1 արդիւն-
քով հաւասարութիւն մը
արձանագրեց Քամերունի
հետ:
Ալիը խմբագետ Սթիւ
Սթաուլըն եթէ դաշտ
ներկայանայ այսօրուան
մրցումին, 100րդ անգամ
ըլլալով պիտի կրէ ազգա-
յին խումբին շապիկը:
Օրուան գլխաւոր իրա-
ւարար պիտի ըլլայ Քիմ
Միլթըն Նիլսըն (Դանիա),
իսկ կողմի իրաւարարնե-
րը՝ Ենա Լարսըն (Դանիա)
եւ Էվգեն Ամլէր (Չեխիա):

ԹԵՆԻՍ. ՈՒԼԱՆ ԿԱՐՈՍ

ՔԱՓՐԻԱԹԻ ՀԱՍԱԻ ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆԻՆ

Ֆրանսայի մէջ տե-
ղի ունեցաւ թենիսի
Ռուան Կարոսի մրցա-
շարքին քառորդ
աւարտականի
մրցումներուն, տիտ-
ղոսակիր էր թի 1
դասուած Ճենիֆըր
Քափրիաթի (Մ. Ն.), 6
- 4, 4 - 6 եւ 6 - 1 ար-
դիւնքով պարտու-
թեան մատնեց
Ֆրանսացի Մարի
Փիրսը:
Կիսաւարտականի
երկրորդ ճակատումը
տեղի կ'ունենայ անո-
րորդ՝ Վինչի (դաս-
ուած՝ 2րդ) եւ Քլարա
Ֆերնանտէսի (Ար-
ժանթին) միջեւ: Վի-



Ճենիֆըր Քափրիաթի

թեան մատնեց 6րդ
դասուած իր պակի-
ցը՝ Մոնիքա Սելէշը,
իսկ արժանթինցի իր
պակիցը՝ Փաուլո
Սուարէսը, 2 - 6, 7 - 6
եւ 6 - 1 արդիւնքով:

Տղոց քառորդ
աւարտականի
մրցումներուն 20րդ
դասուած սպանացի
Ալպեր Քոսթա բաւա-
կան մը պայքարելէ
ետք է, որ միայն յա-
ջողեցաւ պարտու-
թեան մատնել 15րդ
դասուած արժանթինցի
Կիլերնո Քանասը՝ 7 -



Ալպեր Քոսթա

արտական հանգըր-
ւանին իր տոմսը,
նրա 6 - 4 եւ 6 - 3 ար-
դիւնքով պարտու-

«ԱՉԴԱԿ»Ի ՄՈՆՏԻՍԼԻ ՄՐՑԱՆՔՆԵՐ

«Ազդակ»ի Մոնտիսլի գլխաւոր մրցա-
նախարարն է: Արդիւնքները կը հրատա-
րակուին Մոնտիսլին ետք:
Բացառիկ մրցանքները կը վերաբերին
յայտուկ մրցումներու, անջատաբար.
անոնք պիտի հրատարակուին օրը օրին:

«ԱՉԴԱԿ»Ի ՄՈՆՏԻՍԼԻ ԲԱՅԱՌԻԿ ՄՐՑԱՆՔ

- 1.- Ո՞վ պիտի ըլլայ Ուրբաթ, 7 Յունիսի
սին Սափորոյի մէջ (Ճափոն) Զ. խմբակէն
ներս կայանալիք Արժանթին - Անգլիա
մրցումին յաղթականը: (10 նիշ)
 - 2.- Ի՞նչ պիտի ըլլայ մրցումին արդիւնքը:
(15 նիշ)
 - 3.- Որո՞նք պիտի նշանակեն կոլերը:
(25 նիշ):
- Անուն.....
Մականուն.....
Հեռաձայն.....
- Սոյն մրցանքին կտրօնները «Ազդակ»ի
խմբագրատուն պէտք է հասած ըլլան առա-
ւելագոյնը՝ մինչև Ուրբաթ, 7 Յունիսի կէ-
սօր:
- Առաւելագոյն նիշ սպահովող մասնա-
կիցը կ'ըլլայ յաղթականը: Հաւասար նիշե-
րու պարագային, տեղի կ'ունենայ վիճա-
կաձգութիւն:
- Սոյն մրցանքին չեն կրնար մասնակ-
ցիլ «Ազդակ»ի պաշտօնեաները:
Յաղթականը կը շահի «Ազդակ»ի կող-
մէ տրամադրուած պարգև մը:

ԻՍՐԱՅԷԼ

ՊԵՅԼԻՆ ԿԸ ՓՈՐՁԷ ՏԱՊԱԼԵԼ ՊԸՆ ԷԼԻԱԶԱՐԸ

ԵՐՈՒՍԱԼԱՅ, 4 (ՌՈՅԹԸՐԸ)։- Իսրայելի Աշխատաւորական կուսակցութեան անդամ եւ պաղեստինցիներուն հետ խաղաղութեան համաձայնագիրները «գծող» Եոսի Պէլլին յայտարարեց, որ կուսակցութեան շարքերուն մէջ կազմած է «ճնշումի» խմբակ մը, որ արշաւի մը պիտի ձեռնարկէ՝ ձախակողման արմատներուն վերադարձնելու համար Աշխատաւորական կուսակցութիւնը եւ տապալելու համար անոր ղեկավարը։

Պէլլին, որ նաեւ արդարութեան նախկին նախարար էր, ըսաւ որ Աշխատաւորական կուսակցութեան ղեկավար Պենիամին Պըն էլիզաբը պիտի տապալէ, իբրեւ նախապատրաստական քայլ Հոկտեմբերի ընդհանուր ընտրութիւններուն։ Պըն էլիզաբը պաշտպանութեան նախարար է Արիէլ Շարոնի ղեկավարած դաշինքին մէջ։ Պէլլին աւելցուց, որ անհրաժեշտ բոլոր քայլերը պիտի առնէ վերականգնելու համար Աշխատաւորական կուսակցութիւնը, որպէսզի անիկա ունենայ առիւծի բաժինը Իսրայելի յառաջիկայ կառավարութեան մէջ։ Պէլլին ըսաւ նաեւ, որ աշխատաւորականները պէտք է գիտակցին, թէ Պըն էլիզաբը չի կրնար ընտրապայքար մղել Շարոնի, կամ նախկին վարչապետ Պենիամին Նեթանիահուի դէմ Հոկտեմբերի ընտրութիւններուն, երբ Իսրայէլացիք պիտի ընտրեն նոր վարչապետ մը եւ խորհրդարան մը։ Պէլլինի յառաջացուցած ճնշումի խմբակը կը կոչուի Եոսար (Արշալոյս)։ Ան ըսաւ, որ հաւանաբար անջատ կուսակցութիւն մը կազմէ, եթէ Պէլլին Աշխատաւորական կուսակցութեան ղեկավար վերընտրուի։

ԻՐԱՆ

ԽԱՍԵՆԷԻ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵԼ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

ԹԵՀՐԱՆ, 4 (ՌՈՅԹԸՐԸ)։- Իրանի հոգեւոր գերագոյն պետ Ալայթոլլա Ալի Խամենէյի Երեքշաբթի օր խոստացած է վարկաբեկիչ պարտութեան մատնել Մ. Նահանգները, եթէ Ուաշինկթըն Թեհրանի դէմ իր խիստ արտայայտուածները գործադրութեան դնէ։

Մ. Նահանգները աստիճանաբար թափ տուած են Թեհրանի վրայ ճնշումներուն, նախագահ Ճորճ Պուշ-չի Թուսկուարի այն յայտարարութեանէն ետք, թէ Իրան մաս կը կազմէ «չարութեան առանցք»ի մը։

Իրանցի ղեկավարներ կը պատրաստուին ամերիկեան հաւանական յարձակումի մը, սակայն անոնք տարակարծիք են հակադարձութեան ձեւին մասին։

«Թշնամին վարագ է։ Զայրոյթը ցուցաբերելով, Ամերիկա իր թիրախին չի կրնար հասնիլ», չեղտած է Խամենէյի։

Ան կը խօսէր Իսլամական Հանրապետութեան հիմնադիր Ալայթոլլա Խոմենիյի մահուան 13րդ տարեդարձին առիթով հաւաքուած հազարավոր մարդոց։ Անոնք հակադարձած են «Անկցի» Ամերիկայն, անկցի՝ Իսրայէլը՝ բացառանշուծութիւններով։

Մ. Նահանգներու գծով պաշտօնական կարծի կեցւածքին հետեւելու համար ճնշումներու տակ գտնուող նախագահ Մոհամէտ Մաթեմի անցեալ շաբաթ յայտնած է, թէ Իրան մերձեցումի ճիգերը պիտի կասեցնէ ամերիկեան սպառնալիքներուն պատճառով։

Ան Երեքշաբթի օրուան հանդիսութեան ներկայ գտնուած է, նստելով ծայրայեղական բարձրաստիճան պաշտօնատարներու կողքին՝ միացեալ ճակատ մը ցուցաբերելու համար։

Սակայն, խորհրդարանին մէջ Խամենիի դաշնակիցները կող ուղղած են, որ Ուաշինկթընի հետ պաշտօնական յարաբերութիւնները վերսկսին՝ փոխադարձ հասկացողութիւնը քաջալերելու համար, յարաբերութեանց խզումէն 23 տարի ետք։

ՓՈՒԹԻՆ ՎԱՃՓԱՅԻՆ ԿԸ ՀԱՄՈՁԷ, ԹԷ ՄՈՒՇԱՐՐԱՅ ՄԵՂՄԱՅԱԾ Է...

ԱԼՄԱԹԻ, 4 (ՌՈՅԹԸՐԸ)։- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փուտին, որ կը գլխավորէ Հնդկաստանի եւ Փաքիստանի միջեւ պատերազմ մը կրկնարարելու միջազգային ճիգերը՝ Երեքշաբթի օր Հնդկաստանի վարչապետ Աթալ Պիհարի Վաճփայի յայտնած է, թէ Փաքիստան «դրական լուրջ նշաններ» ցուցաբերած է՝ հետգհետէ աւելի թափ ստացող լարուածութիւնը մեղմացնելու համար։

Փաքիստանի նախագահ Փերվէզ Մուշարրաֆ յայտնած է, թէ Փուտինի Մոսկուա այցելելու մէկ հրաւերը ընդունած է, աւելցնելով, որ ան պիտի հրաւերէ նաեւ Վաճփային։ Սակայն, ան ըսած է, թէ այցելութեան թուականը չէ ճշդելու։

Հնդիկ եւ փաքիստանցի ղեկավարները Ալմաթիի մէջ (Ղազախստան) 5 ամսուան ընթացքին առաջին անգամ ըլլալով նոյն սեղանին շուրջ նստած են, սակայն հրապարակաւ անոնք կոտորած մնացած են Քաշմիրի գծով իրենց տարիներու դիրքորոշումին։

Երկու ղեկավարները դժուար առաքելութիւն մը կը դիմադրակեն՝ մէկ կողմէ ներքին գետնի վրայ ծայրայեղական զգացումներուն գոհացում տալու եւ միւս կողմէ՝ կանխարգելելու պատերազմ մը, որ կրնայ աղէտալի ըլլալ երկու կողմերուն համար։

Նախապէս Վաճփայի պատրաստակամութիւն յայտնած է Փաքիստանի հետ բանակցելու Քաշմիրի հարցով, սակայն միայն թէ սահմանէն թափանցումները դադարին։

Իսկ Մուշարրաֆ խոստացած է, որ Փաքիստան առաջին յարձակողը պիտի չլլայ։

«ԲԱՅԻՏԱ» ԿԸ ՄՆԱՅ ԳՈՐԾՈՆ Կ'ԸՍԷ ՌԱՄՏԵԼՏ

Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտ երէկ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ յայտնած է, որ Ուսամա Պըն Լատէնի «Քալիտա» ցանցը գործօն կը մնայ աշխարհի տարածքին, սակայն որեւէ ցուցանիչ չկայ, թէ Պըն Լատէն պաշտօնապէս կը ղեկավարէ անոր գործունէութիւնը։



Ռամսֆելտ

Նախարարը «Ուաշինկթըն Փոսթ» թերթին յայտնած է, որ չի գիտեր, թէ Պըն Լատէն ապահովութեան պատճառներով գործունէութիւն չի ցուցաբերեր, թէ ան հիւանդութեան կը տառապէ կամ մեռած է։

Այսուհանդերձ, ըսած է ան, ամերիկեան կառավարութիւնը փաստեր ունի, թէ «Քալիտա»ի այլ ղեկավարներ կը շարունակեն դրամահաւաք կատարել եւ իրարու հետ հաղորդակցիլ։

Ռամսֆելտ դարձեալ խոստովանած է, որ հատուկ ԱՖՊանիստանի մէջ Ուաշինկթընի ձեռնարկած յարձակումներուն, «Քալիտա»ի անդամ մեծ թիւով գինեալներ խոյս տուած են դէպի Փաքիստան։

Միւս կողմէ, եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաֆ Երկուշաբթի օր յայտնած է, թէ իր գաղտնի սպասարկուծիւնները Սեպտեմբեր 11 յարձակումներէն շաբաթ մը առաջ գզուչացուցած են ամերիկացի պաշտօնատարները, թէ «Քալիտա» ամերիկեան թիրախի մը դէմ մեծ գործողու-

թեան մը ձեռնարկելու յառաջացած հանգրուաններուն կը գտնուին։

Ըստ «Նիւ Եորք Թայմզ» թերթին, Մուսարաֆ յայտնած է. «Չէինք գիտեր, թէ նման բան կրնայ պատահիլ։ Կը կարգեկավարներ կը շարունակեն դրամահաւաք կատարել եւ իրարու հետ հաղորդակցիլ։

Սպիտակ Տան բանբերը Արի Ֆլայշըր ըսած է, որ յստակ չէ, թէ Մուսարաֆ ինչ տեղեկութեան մասին կը խօսի հարցազրոյցին մէջ։

Ան յայտնած է, որ ամերիկեան եւ եգիպտական գաղտնի սպասարկուծիւնները 2001ի առաջին ամիսներուն տեղեկութիւնները փոխանակած են Մ. Նահանգներէն դուրս ահաբեկչական ընդհանուր սպառնալիքի մը մասին, սակայն, յստակ ոչինչ կար Սեպտեմբեր 11ի գծով։

ՀԱՂՈՂԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍ

Մ. Նահանգներու նա-

խագահ Ճորճ Պուշ-չի երէկ յայտնած է, որ յստակ է, թէ էֆ. Պի. Այ. եւ Սի. Այ. էյ. անհրաժեշտ ձեւով հաղորդակցութեան մէջ չեն եղած Սեպտեմբեր 11էն առաջ, սակայն այժմ երկու գործակալութիւնները շատ աւելի սերտ հաղորդակցութեան մէջ կը գտնուին։

Քոնկրէսին մէջ այս շաբաթ պիտի սկսին յատուկ նիստեր, որոնք ընթացքին պիտի քննարկուի այդ գործակալութիւններուն ձախողութիւնը՝ զողազերծելու դաւը, որուն ընթացքին չորս օրանաւեր առեւտրագում էին։

Ան ըսած է, որ որեւէ փաստ չի տեսներ, թէ Մ. Նահանգներ ունեցած են տեղեկութիւններ, որոնք պիտի արտօնէին Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի վրայ յարձակումներուն կանխարգելումը։

(ՌՈՅԹԸՐԸ)

Ի՞ՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԵԱՆ...

Ծարուճակուած 3րդ էջէն

փողոց իջնել։ Պրորի էւ Հարիրի չկրցան լուծման մը յանգիլ, իսկ կարգ մը երեսփոխաններ կը սպառնան հրաժարիլ։

«Անուար» օրաթերթը կը գրէր. «Ներքին գործոց նախարարութիւնը կը պատրաստուի Միւրա Մըրի յաղթանակը յայտարարելու։ Կապրիէլ Մըր էւ ընդդիմութիւնը կը մերժեն այս արդիւնքը եւ կը սպառնան ժողովրդային շարժումներու դիմել, հանրապետութեան նախագահը կը վզուցանէ երկրին կայունութեան վնասող քայլերու դիմելէ»։

«Անկնկալներով լեցուն Երկուշաբթի. Քուէխոյի Յանձնախումբը շնչեց Հըմլայ գիւղի սնտուկին արդիւնքները եւ հաստատեց Միւրա Մըրի ընտրութիւնը. ընտրութիւններուն արդիւնքներուն շուրջ ստեղծուած հակասութիւնները կրնան քաղաքական տագնապի մը յանգիլ. նախագահ Լաիուտ կոչ կ'ուղղէ հետեւելու օրէնքի տրամադրութիւններուն», կը գրէր «Լիուա», իսկ «Քիֆահ Արապի» կը նշէր, թէ «նախագահ Լաիուտ Պըքրէի պատուիրակութեան ըսաւ. Ընտրութեան արդիւնքը օրէնքի համապատասխան է, իսկ պարտուող կողմը կրնայ դիմել սահմանադրական դատարան։ Բուէա-

խոյ Բարձրագոյն խորհուրդը շնչեց Հըմլայ յաղթանակը եւ Կապրիէլ Մըրի յաղթանակը»։

Իր ներքին էջով տեղական մամուլը լուսարձակի տակ առած է ընտրութիւններու արդիւնքներու յառաջացուցած անկայուն մթնոլորտը, պանապան անձերու, կողմերու, մարմիններու եւ կուսակցութիւններու կեցուածքները, յայտարարութիւնները եւ առած քայլերը։ Այս ծիրին մէջ թերթերը նաեւ անդրադարձած են Մեթնի մասնակի ընտրութիւններուն մասին Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի հրապարակած հաղորդագրութեան, որուն մէջ Հ. Յ. Դ. կը գնահատէ ընտրական գործընթացին տիրած հանդարտ եւ դրական մթնոլորտը՝ ընդգծելով, որ հայ քուէարկողները խիտ շարքերով կատարեցին իրենց ազգային քաղաքացիական պարտականութիւնը։ Թերթերը նաեւ կը նշեն, թէ հաղորդագրութեան մէջ Կեդրոնական Կոմիտէն շնորհաւորած է յաղթականը՝ ո՛վ որ «նախագահ Լաիուտ Պըքրէի պատուիրակութեան ըսաւ. Ընտրութեան արդիւնքը օրէնքի համապատասխան է, իսկ պարտուող կողմը կրնայ դիմել սահմանադրական դատարան։ Բուէա-

ընտրութիւններուն հայ քուէարկողներուն մասնակցութիւնը չէ անցած 20 առ հարիւրը, մինչ կը սպասուէր, որ անկալ ըլլայ 9էն 11 հազար։ Օրաթերթը շարունակելով նշած է, թէ հայ երեք կուսակցութիւնները ծխտած են այս տուեալներուն ճշգրտութիւնը եւ հաստատած են, թէ 2000ի ընտրութիւններուն արձանագրուած է շուրջ 8750 քուէարկող, իսկ այս ընտրութիւններուն՝ 8485, ինչ որ կը փաստէ, թէ հայերը հետեւած են իրենց ղեկավարութեան «Տիար» կ'աւելցնէ, թէ հայկական կուսակցութիւնները ծխտած են, թէ իրենք կատարած են իրենց խոստումը եւ քուէարկած են այն անձին, որուն պարտութիւնը յայտարարած են։

«Լիուա» օրաթերթը հարցապրոյց մը ունեցած է երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովսէփեանի հետ։ Հանդիպումին ընթացքին արծարծուած են Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն, երկրին տնտեսական, քաղաքական իրավիճակին եւ Լիբանանի մարդկական կենսքին վերաբերող հարցեր։

ՎԱՏԻԿԱՆ ԿԸ ՉԵՐՔԷ, ԹԷ ՊԱՊԸ ՊԻՏԻ ՅՐԱԺԱՐԻ

ՎԱՏԻԿԱՆ, 4 (ՌՈՅԹԸՐԸ)։- Վատիկան Երեքշաբթի օր հերքեց այն լուրերը, ըստ որոնց՝ Յովհաննէս Պողոս Բ. պապը Օգոստոսին պիտի հրաժարի։ Վատիկանի գլխաւոր բանբերը կը հակադարձէր չեխական լրատուական աղբիւրներու կողմէ հրապարակուած լուրի մը, որ հիմնուած է լեհ եկեղեցւոյ աղբիւրներուն վրայ։

Յիշեալ լուրերու համաձայն, պապը երբ Օգոստոսին Լեհաստան այցելէ, պիտի յայտարարէ, թէ առողջական պատճառներով պիտի հրաժարի։ Վատիկանի բանբերը սակայն հաստատեց, որ հրաժարելու լուրը անհիմն է եւ թէ պապը յառաջիկայ վեց ամիսներուն ունի բաւական լեցուն ժամանակացոյց մը։

Կաթողիկէ եկեղեցւոյ պատմութեան մէջ եօթը հարիւր տարի առաջ պապ մը ցմահ չէ իշխած եւ հանգրուան անցած է։ Յարը նման երեւոյթ չէ արձանագրուած։

ՌԱՅԼԵՏ

ԴԻՄԱԿԱԻՈՐ ԶԻՆԵԱԼ ՆԵՐ ԴՊՐՈՅԱԿԱՆՕԹՈՊԻՍԻՍԻՄԸ ՎՐԱՅ ԿՐԱԿ ԿԸ ԲԱՆԱՆ

ՊԱՆՔՈՔ, 4 (ՌՈՅԹԸՐԸ)։- Դիմակաւոր գինեալներ պատերազմական գնդացիներով կրակ բացին դպրոցական օթպիւսի մը վրայ, Թայլանտի մէջ, Միանմարի սահմանագիծին մօտ։ Երկու պատանիներ սպաննուեցան եւ 13 ուրիշներ վիրաւորուեցան, յայտնեցին Թայլանտի պաշտօնատարները։

Միջոցաւ տեղի ունեցած է զուգական հանդարտ ճամբու մը վրայ՝ Միանմարի սահմանէն հազու քսան քմ. հեռու։ Ականատեսներ ըսին, որ երեք գինեալներ գինուորական տարազներով ծառերուն ետեւէն դուրս գալով՝ փամփուռներու տարափի տակ առած են օթպիւսը, որ կը փոխադրէր 25 աշակերտներ՝ 13-17 տարեկան։ Ոստիկանութիւնը հետաքննութիւն բացած է, սակայն տակաւին յստակ չէ, թէ որո՞նք են գինեալները եւ ի՞նչ է գործողութեան զրգապատճառը։

ՏԱՐԵԿԱՆ 50 ՄԻԼԻՈՆ ՆՈՐԱԾԻՆ ԾՆՈՒՆԵՂԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԶՈՒՆԵՆԱՐ

Տարեկան 50 միլիոն նորածին՝ աշխարհի ընդհանուր թիւին 41 առ հարիւրը, ծնունդի փաստաթուղթեր չեն ստանալ, ըստ ՄԱԿի երէխաներու ԵՈՒՆԻՍԵՖ գործակալութեան, որ երէկ կոչ ուղղած է կառավարութիւններուն՝ յանձնարել քայլերու դիմելու, բոլոր մանուկներուն պաշտօնական ինքնութիւն եւ ազգութիւն տալու համար։

«Ծննդեան վաւերաթուղթ մը անձի մը ամէնէն կարեւոր փաստաթուղթն է», ըսած է ԵՈՒՆԻՍԵՖի գործադիր տնօրէն Քարլ Պելլըմի։

Երէխաներ, որոնք չեն արձանագրուած (թէ ծնած են) կրնան պրկուիլ ուսումէ, առողջական հոգատարութիւն։

Սահարայի հարաւային շրջանին մէջ նորածիններու 70 առ հարիւրը եւ Հարաւային Ասիոյ մէջ 63 առ հարիւրը չեն արձանագրուած 2000 թուականին։

Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկայի մէջ, բոլոր ծնունդներուն մօտաւորապէս մէկ երրորդը չէ արձանագրուած 2000ին, մինչ Արեւելեան Ասիոյ եւ Խաղաղականի շրջանին մէջ այդ համեմատութիւնը 22 առ հարիւր եղած է։

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄԻ. ԱՅ. ԷՅ. Ի ՏՆՕՐԵՆԸ ՌԱՄԱԼԼԱՅԻՄԷՂ...

Ծարուճակուած Ա. էջէն

տօնակալ այցելութեան մը համար։ Վաղը ան տեսակցութիւններ պիտի ունենայ ամերիկացի պաշտօնատարներու հետ, իսկ Ուրբաթ եւ Շաբաթ օր ան Բեյքի Տէյլիտի մէջ հանդիպումներ պիտի ունենայ Պուշ-չի հետ։ Մուսարաֆի այցելութեան նպատակը պիտի ըլլայ առաջարկներ ներկայացնել Միջին Արեւելքի խաղաղութեան բանակցութիւններուն վերակցելու մասին։

Եգիպտացի պաշտօնատար մը ըսաւ, որ Գաիիբի նպատակն է հուսիս վերադարձնել եւ յառաջիկայացի մէջ ղնել խաղաղութեան գործընթացը բանակցութեանց սեղան վերադարձնելով պաղեստինցիներն ու իսրայէլացիները։ Այլ պաշտօնատար մը ըսաւ, որ Մուսարաֆ պատրաստած է ժամանակացոյց մը, կոր պիտի ներկայացնէ Պուշ-չի։

Մուսարաֆի Միացեալ Նահանգներ մեկնումին նախօրեակին, Մեյուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարար Մեյուտ Ֆայսալ Իշխանը երէկ Գաիիբի մէջ հանդիպումներ ունեցաւ Մուսարաֆի եւ Եգիպտացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ՝ համակարգելու համար երկու երկիրներուն կեցուածքը խաղաղարար ճիգերուն գծով, ինչպէս նաեւ յանձնարել խորհրդակցութիւններ կատարելու համար։

(ՌՈՅԹԸՐԸ)